ՖՐԱՆՑ ԿԱՖԿԱ

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1915.info



Նշանավոր

Կնիգարեն

ՖՐԱՆՑ ԿԱՖԿԱ

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԸ՝ ԶԱՔԱՐ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ

Անտարես

Գերմաներենից թարգմանեց
Սամվել Ա. Մկրտչյանը

Նկարազարդումները՝
Զաքար Դեմիրճյանի

թվայնացրել է 1915.info կայքը

Կաֆկա Ֆրանց
Կերպարանափոխություն / Ֆրանց Կաֆկա. – Եր.: Անտարես, 2020. – 88 էջ:

Ֆրանց Կաֆկայի «Կերպարանափոխություն» վիպակը համաշխարհային գրականության ուղենշային գործերից մեկն է:

ISBN 978-9939-76-484-9

© «Անտարես», 2020
© Դեմիրճյան Զ., նկարազարդումներ, 2020

Անտարես

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Երբ Գրեգոր Զամզան մի առավոտ անհանգիստ երազներից արթնացավ, գտավ իրեն իր սեփական անկողնում սարսափելի ուտիճի կերպարանափոխված: Պառկած էր պատյանի տպավորություն թողնող կոշտ մեջքի վրա և երբ գլուխը փոքր-ինչ բարձրացրեց, տեսավ իր կամարի տեսք առած, օղակներ հիշեցնող շերտերի բաժանված շագանակագույն փորը, որի կորության վրա վերմակը, ամբողջովին ներքև սահելուն պատրաստ, հազիվ էր մնում: Բազմաքանակ, սովորական չափերի հետ համեմատած ողորմելիորեն բարակ ոտքերը անճարակորեն կուչուձիգ էին լինում աչքերի առաջ:

«Այս ի՞նչ է կատարվել ինձ հետ»,– մտածեց նա:

Նրա սենյակը՝ սովորական, բայց բնակության համար անչափ փոքր սենյակը, անվրդով տեղավորված էր իր չորս պատերի արանքում: Սեղանի վերևում, որի վրա տարատեսակ կտորեղենի քանդած նմուշներ էին խառը լցված (Զամզան առևտրական շրջիկ գործակատար էր), մի նկար էր կախված, որ նա էր վերջերս նկարազարդ ամսագրից կտրել ու դրել անչափ գեղեցիկ, ոսկեփայլ շրջանակի մեջ: Նկարում մի կին էր պատկերված, որ մորթե գլխարկը գլխին, մորթե բոան վրան առած՝ նստած էր ուղիղ և մորթե ծանր ձեռնամուշտակը, որի մեջ՝ արմունկից ներքև, անհետացել էր ամբողջ թևը, պարզել էր իրեն նայողներին: Հետո Գրեգորի հայացքը ուղղվեց դեպի պատուհանը, և մռայլ եղանակը (լսվում էր, թե ինչպես են անձրևի կաթիլները պատուհանի թիթեղներին բախվում) նրան անմնացորդ մելամաղձոտ դարձրեց:

«Ինչ կլիներ, որ մի քիչ էլ քնեի ու մոռանայի այս բոլոր հիմարությունները»,– մտածեց նա, սակայն դա միանգամայն անհնար էր իրականացնել, որովհետև նա սովոր էր աջ կողմի վրա քնել, մինչդեռ իր ներկայիս վիճակում չէր կարող իրեն այդ դիրքին բերել: Ինչ ուժով էլ փորձում էր աջ կողմի վրա շուռ գալ, շարունակ ճոճվում էր ու ետ էր ընկնում: Նա համարյա հարյուր անգամ փորձեց, փակեց աչքերը, որ ստիպված չլիներ տեսնել զարկվող տոտիկները, և միայն այն ժամանակ դադարեցրեց, երբ սկսեց կողի տակ թեթև, մինչև հիմա անծանոթ, թույլ ու բութ ցավ զգալ:

«Ախ Աստված,– մտածեց նա,– այս ի՜նչ հոգնեցնող մասնագիտություն եմ ընտրել: Գիշեր լինի, թե ցերեկ, միշտ ճամփորդության մեջ եմ: Գործի պատճառած անհարմարությունները շատ ավելի շատ են, քան տեղում կազմակերպված աշխատանքը, ու դեռ մի բան էլ ինձ է վիճակվել շրջիկ գործակատար լինելու այս ամբողջ չարչարանքը, գնացքների շարժվելու ժամերի մասին հոգս քաշելը, ոչ կանոնավոր ու վատ սնունդը, շարունակ փոփոխվող, երբեք տևական բնույթ չկրող, ոչ մի անգամ սրտագին ջերմություն չստացող շփումը մարդկանց հետ: Գրողի ծո՛ցը թող կորչի այս ամենը»:

Նա փորի վրա, կամարի տեղում թեթևակի քոր զգաց. շարունակ մեջքի վրա պառկած՝ դանդաղ հրեց իրեն մահճակալի գլխակալին մոտ, որ կարողանար ավելի հարմար բարձրացնել գլուխը, գտավ քոր եկող տեղը, որ ծածկված էր բացառապես փոքր, սպիտակ կետիկներով, ինչից գլուխ չիանեց, ու ցանկացավ ոտքերից մեկով շոշափել քոր եկող տեղը, սակայն իսկույն էլ ոտքը ետ քաշեց, որովհետև դրան կպչելը նրան սառը դող էր պատճառում:

Նա նորից ետ սահեց ու պառկեց իր նախկին տեղում:

«Այս վաղ ժամին արթնանալը ում ասես կգժվեցնի,– մտածեց նա:– Մարդ պետք է իր քունն առնի: Մյուս շրջիկ գործակատարները հարեմի կանանց կյանքով են ապրում: Երբ ես, օրինակի համար, նախքան օրը կիսվելն արդեն հյուրանոց եմ վերադառնում, որպեսզի ձեռք բերված առաջարկները կարգի բերեմ, այդ պարոնները նոր միայն նախաճաշի են նստում: Այ, պետք է փորձեի այս բանը շեֆիս ասել. տեղնուտեղը ինձ դուրս կշպրտեին: Չնայած ինչ իմանաս, թե դա ինձ համար ավելի լավ չէր լինի: Եթե ծնողներիս պատճառով ինձ զսպած չլինեի, վաղուց հեռացած կլինեի, կանգնած կլինեի շեֆիս դիմաց ու սրտիս խորքից ասած կլինեի նրան իմ կարծիքը: Հաստատ ցած կընկներ իր նստած տեղից: Դա ինչ տարօրինակ պահվածք է. բազմում է իր կառավարակետում ու վերևից ներքև կռացած է խոսում աշխատակիցների հետ, որոնք դեռ մի բան էլ ղեկավարի ծանր լսելու պատճառով ստիպված են շատ մոտ գալ: Ոչինչ, հույսը մինչև վերջ կորսված չէ. այ, երբ ամբողջ փողը հավաքեմ, որ ծնողներիս պարտքը վճարեմ նրան,– թող հիմի ամենաշատը հինգ կամ վեց տարի էլ տևի, մտադրությունս անպայման կիրականացնեմ: Այ, հենց այդ ժամանակ էլ կօգտվեմ: Իսկ հիմա, ինչ ուզում է լինի, անհրաժեշտ է, որ վեր կենամ. գնացքս ժամը հինգին շարժվում է»:

Նա նայեց զարթուցիչի կողմը, որ տկտկացնում էր պահարանի վրա:

«Երկնայի՜ն հայր»,– մտածեց նա: Արդեն ժամը վեցն անց էր կես, ու սլաքներն անվրդով առաջ էին շարժվում. նույնիսկ կեսն էր անցել, համարյա արդեն քառորդ պակասին էր մոտենում: Կարո՞ղ է զարթուցիչը չէր զանգել:

Անկողնում պառկած տեղից էլ էր երևում, որ ժամացույցը ուղիղ ժամը չորսի վրա էր դրված, և հաստատ էր, որ զանգը տվել էր: Լավ, բայց հնարավո՞ր էր քնով անցած մնալ մինչև անգամ կահույքը ցնցող զրնգոցի տակ: Թեև նա ոչ հանգիստ, բայց հավանական է, որ ամուր էր քնել: Հիմա ի՞նչ կարող էր անել: Հաջորդ գնացքը շարժվում էր ժամը յոթին, դրան հասնելու համար իրեն հարկ կլիներ անիմաստ տեղը շտապել, մինչդեռ կտորների իր հավաքածուն էլ դեռ դասավորված չէր, և անգամ եթե գնացքին էլ հասներ, շեֆի շանթ ու որոտից չէր կարողանա խուսափել, որովհետև գործատեղի սպասավորը սպասելիս էր եղել ժամը հինգի գնացքի մոտ և վաղուց արդեն զեկույց էր ներկայացրել նրա՝ գնացքը բաց թողնելու մասին: Շեֆի կամքով էին այդպես վարվում. անմիտ ու անիմաստ հանձնարարություն էր: Իսկ ինչ կլիներ, եթե հիմա հայտներ, որ հիվանդ է: Բայց դա անչափ տհաճ ու կասկած հարուցող քայլ կլիներ, որովհետև Գրեգորը իր արդեն հինգ տարին լրացող ծառայության ընթացքում դեռ ոչ մի անգամ հիվանդ չէր եղել: Անկասկած, շեֆը կգար սոցիալական ապահովագրության բժշկի ուղեկցությամբ, իրենց ծույլ որդու կապակցությամբ նախատինք կկարդար ծնողներին, իրենց բոլոր առարկությունները կմերժեր՝ հիմնվելով իր բերած բժշկի փաստարկների վրա, որի համար բոլոր մարդիկ միանգամայն առողջ էին, միայն թե վախենում էին աշխատելուց: Թեև այս մի տվյալ դեպքի կապակցությամբ արդյոք նա իրավացի չէ՞ր լինի: Իրականում Գրեգորը հիմա միանգամայն լավ էր և առանձնահատուկ, ուժեղ սովածություն էր զգում՝ անկախ այն բանից, որ երկար քնելուց հետո հիմա նրա մոտ իսկապես ավելորդ քնկոտություն կար:

Մինչ նա արագ-արագ այս բաների մասին էր մտածում՝ առանց ի վիճակի լինելու մահճակալը թողնելու մասին վճիռ կայացնելու, զարթուցիչը հենց յոթից քառորդ պակասի զանգերը խփեց, ու նրա մահճակալի գլխի կողմից սենյակի դուռը անհամարձակ թակեցին:

– Գրեգոր,– լսվեց թակողի ձայնը. մայրն էր:– Յոթից քառորդ է պակաս: Դու չէիր պատրաստվում մեկնե՞լ:

Ի՜նչ քնքուշ էր նրա ձայնը. Գրեգորը սարսափեց, երբ լսեց սեփական՝ պատասխանող ձայնը: Այն, անկասկած, իր նախկին ձայնն էր, ինչին սակայն կարծես ներսից խառնվել էր ճնշված մի ծվծվոց, որ հնարավոր չէր լռեցնել, և դրա հետևանքով իր խոսքերը իրականում միայն առաջին պահին էին իրենց հստակությունը պահպանում, որպեսզի արձագանքվելիս այն աստիճան աղավաղվեին, որ մարդ այլևս վստահ չէր՝ արդյոք լավ էր լսել: Գրեգորը ցանկություն ուներ մանրամասն պատասխանել ու բացատրել, սակայն այս դրության մեջ միայն սահմանափակվեց՝ ասելով.

– Այո, այո, մայրիկ: Հիմա արդեն վեր կկենամ:

Հավանաբար փայտե դուռն էր պատճառը, որ հակառակ կողմում Գրեգորի ձայնի մեջ եղած փոփոխությունը աննկատ մնաց, և մայրը, բացատրությունից բավարարված, ոտքերը քստքստացնելով հեռացավ:

Սակայն այս կարճ խոսակցությունը պատճառ դարձավ, որ ընտանիքի մյուս անդամները ուշադրություն դարձնեին, որ Գրեգորը, հակառակ սպասվածի, դեռ տանն է, և հիմա արդեն կողքի դուռը բախեց հայրը. ոչ ուժեղ, բայց բռունցքով բախեց.

– Գրեգոր, Գրեգոր,– ձայն տվեց նա:– Այդ ի՞նչ է եղել:

Կարճ դադար տալուց հետո նա ցածր ձայնով նորից կանչեց.

– Գրեգոր: Գրեգոր:

Սենյակի հակառակ կողմի դռան մոտ քույրը ցածր ձայնով հետաքրքրվեց.

– Գրեգո՞ր: Քեզ լա՞վ չես զգում: Քեզ ինչ-որ բա՞ն է պետք:

– Արդեն պատրաստ եմ,– երկու կողմերին էլ պատասխանելով՝ ասաց Գրեգորը, և ճիգ գործադրեց բառերը հատ-հատ արտաբերելով ու իր արտաբերած առանձին-առանձին բառերի մեջ երկար դադար տալով կասկած առաջացնող ամեն ինչ հարթել:

Հայրը, իսկապես, վերադարձավ իր նախաճաշին, մինչդեռ քույրը շշնջաց.

– Գրեգոր, բաց կանե՞ս դուռը: Ինչ կլինի, բաց արա:

Մինչդեռ Գրեգորը բոլորովին էլ մտադիր չէր դուռը բացել ու դեռ մի բան էլ գոհ էր տարբեր վայրերում լինելու փորձից ձեռք բերված զգուշությունից, որ անգամ տանը գտնվելու ժամանակ էր գիշերը քնելուց բոլոր դռները փակում:

Ամենից առաջ նա մտադիր էր հանգիստ, առանց շտապելու վեր կենալ, հագնվել, ապա նախաճաշել ու հետո միայն միտք անել, թե ինչն ինչպես է շարունակվելու, որովհետև հստակ նկատել էր, որ պառկած տեղը միտք անելով ոչ մի խելացի բան չի անի: Նա հիշեց, որ էլի էր պատահել, երբ անկողնում, հավանաբար ոչ հարմար դիրքով պառկած լինելու պատճառով, երբեմն թեթևակի ցավեր էր զգացել, մինչդեռ անկողնուց ելնելուց հետո պարզվել էր, որ դրանք ընդամենը երևակայություն են, ու հիմա սպասում էր, թե իր այսօրվա զգացած բաները ինչպես էին իրար հետևից փարատվելու: Այն, որ ձայնի հետ կապված փոփոխությունը ուրիշ բան չէր, քան լավ մրսած լինելու նախանշան, ինչը շրջիկ գործակատարի մասնագիտական հիվանդությունն էր, դրանում նա բացարձակապես որևէ կասկած չուներ:



Վերմակը վրայից գցելը բավական հեշտ էր. նրան պետք եղավ ընդամենը մի փոքր փքվել, և այն ինքնիրեն ցած սահեց: Բայց հետո գործը դժվարացավ, հատկապես հենց այն պատճառով, որ նա անչափ լայն էր: Ուղղվելու համար նրան երկու ձեռք ու երկու թև էր հարկավոր, մինչդեռ դրանց փոխարեն նա միայն մեծ քանակությամբ տոտիկներ ուներ, որոնք բացի նրանից, որ անվերջ-անդադար տեսակ-տեսակ շարժումների մեջ էին, դեռ մի բան էլ նա չէր կարողանում կառավարել դրանք: Հենց ցանկանում էր տոտիկներից մեկը ծալել, պարզվում էր, որ հենց դա էր առաջին հերթին ուղղվում, իսկ եթե անգամ նրան հաջողվում էր այդ ոտքով անել այն, ինչ ինքն էր ուզում, ապա մնացած տոտիկները առանց հսկողության թողնվածների պես, անչափ մեծ ակտիվությամբ, ցավ պատճառելու աստիճան արագ կուչուձիգ էին լինում:

– Մենակ թե անկողնում անիմաստ տեղը պառկած չմնամ,– ինքնիրեն խոսեց Գրեգորը:

Առաջին հերթին նա մտադիր էր մարմնի ներքևի մասը անկողնուց դուրս հանել, մինչդեռ այդ ներքևի մասը, որը նա մինչև հիմա չէր տեսել և որի մասին որևէ հստակ պատկերացում չուներ, պարզվեց, որ անչափ դժվար է շարժելը. այնքան դանդաղ էր, որ երբ վերջապես, համարյա կատաղության հասած, բոլոր ուժերը կենտրոնացնելով, առանց որևէ բան հաշվի առնելու առաջ նետվեց, հաշվարկները սխալ դուրս եկան. մեծ թափով բախվեց մահճակալի ներքևի գլխակալին, և այրող ցավը, որ զգաց, հասկացրեց, որ իր մարմնի հենց ներքևի մասն է այդ պահին ամենազգայուն տեղը:

Դրանից հետո նա փորձեց մարմնի վերին մասը հանել մահճակալից ու գլուխը դանդաղ պարզեց դեպի մահճակալի եզրը: Այս շարժումը բավական հեշտ հաջողվեց նրան, և չնայած իր լայնքին ու ծանրությանը՝ մարմնի ամբողջ զանգվածը վերջիվերջո դանդաղ հետևեց գլխի շարժմանը: Ու հենց նա գլուխը մահճակալից դուրս հանելով օդի մեջ կախվեց, վախ զգաց այդ կերպ դուրս գալու համար. եթե հանկարծ այդ դիրքով ընկներ, պարզապես հրաշք պետք է կատարվեր, որ գլուխը չվնասեր: Ինչ ուզում է լիներ, նա

գոնե հենց այս պահին իրավունք չուներ կորցնել ու գիտակցությունը. ավելի լավ էր մնար անկողնում:

Ու հենց նա նորից նույն կերպ չարչարվելուց հետո դժվարությամբ շնչելով առաջվա նման պառկեց, երբ նորից տեսավ, թե ինչպես են իր տոտիկները նախկինի համեմատ ավելի մեծ կատաղությամբ միմյանց բախվում, և զգաց, որ անզոր է այդ անկառավարելիությունը մեղմել ու կարգի բերել, նա նորից ինքնիրեն ասաց, որ անկարող է պառկած մնալ անկողնում, և որ ամենախելամիտ բանը կլինի ամեն ինչ զոհաբերել, անգամ եթե նվազագույն հույս լինի այդ կերպ մահճակալից ազատվելու համար: Միաժամանակ նա չմոռացավ մեկ-մեկ ինքնիրեն հիշեցնել, որ հուսահատ որոշումներ կայացնելուց առաջ շատ ավելի լավ կլինի քայլերը հանգիստ ու անշտապ կշռադատել: Այդ պահերին նա, տեսողությունը հնարավորին չափ լարելով, աչքերը հառում էր պատուհանի կողմը, մինչդեռ առավոտվա մառախլապատ տեսարանի պատճառով անգամ նեղ փողոցի դիմացի մայթը չէր երևում, և, ցավոք, դժվար էր որևէ վստահություն ու առույգություն կորզել:

«Արդեն ժամը յոթն եղավ,– զարթուցիչի հերթական զարկերին արձագանքելով՝ ասաց նա մտքում:– Արդեն ժամը յոթն է, ու մինչև հիմա այսպիսի մառախուղ է»: Եվ հազիվ շնչելով՝ նա որոշ ժամանակ անշարժ պառկեց, կարծես կատարյալ լռությունից նա հենց այն է՝ իրական ու ինքնին հասկանալի պարագաների վերադարձին էր սպասում:

«Մինչև ութն անց քառորդ խփելը ես անպայման պետք է վերջնականապես դուրս ելած լինեմ մահճակալից: Բացի դրանից, հիմա կարող է գործի տեղից որևէ մեկը գալ ու ինձ հարցնել. ժամը յոթը չեղած՝ այնտեղ արդեն սկսում են աշխատանքը»:– Այդ մտքերով տարված՝ նա սկսեց մարմինը իր ամբողջ երկայնքով հավասարաչափ ճոճելով դուրս հրվել մահճակալից: Եթե նրան հաջողվեր այդ կերպ մահճակալից դուրս նետվել, գլուխը, հավանական է, անվնաս կմնար, որովհետև նա մտադիր էր ընկնելու պահին գլուխը կտրուկ բարձր պահել: Մեջքը պետք է որ պինդ լիներ. եթե այդպես ընկներ հատակի գորգին, դրան չպետք է որ մի բան պատահեր: Նրան

ամենից շատ անհանգստացնում էր այն հավանական բարձր աղմուկը, որ, անշուշտ, կլիներ, և, անշուշտ, բոլոր դռների մյուս կողմում եթե ոչ սարսափ, ապա անհանգստություն որ հաստատ կառաջացներ:

Ինչ ուզում է լիներ, փորձել պետք էր:

Երբ Գրեգորն արդեն կիսով չափ դուրս էր ցցվել մահճակալից,– այս նոր մեթոդը ավելի շատ խաղ էր, քան ուժի կիրառում. նրան պետք էր շարունակ թափ առնելով ճոճվել,– նա պատկերացրեց, թե այս ամենը ինչքան հեշտ կլիներ, եթե որևէ մեկը իրեն օգնության գար: Երկու ուժեղ մարդու օգնությունը միանգամայն բավական կլիներ. նա մտածեց հոր և իրենց աղախնի մասին: Նրանց պետք կլիներ միայն իրենց ձեռքերը մտցնել իր կորացած մեջքի տակ, այդպես իրեն մահճակալից պոկել ու պինդ պահած կռանալուց հետո զգուշորեն համբերել, որ ինքը վերջապես կանգներ հատակին, ուր արդեն իր տոտիկները հավանաբար ինչ-որ իմաստ ձեռք կբերեին: Հիմա ի՞նչ, անկախ այն բանից, որ սենյակի դռները փակված էին, նա իսկապե՞ս պետք է մեկնումեկին օգնություն կանչեր: Ու թեև նա մեծ նեղության մեջ էր, այս մասին մտածելիս չկարողացավ զսպել ժպիտը:

Նա արդեն այնքան էր դուրս ցցվել, որ եթե ավելի ուժեղ ճոճվեր, հազիվ թե կարողանար հավասարակշռությունը պահել, բացի այդ, հիմա նա արդեն պարտավոր էր վերջնական որոշում կայացնել, որովհետև հինգ րոպե անց յոթն անց քառորդ կլիներ, ու հենց այդ պահին էլ դռան զանգը տվեցին:

«Ինչ-որ մեկն է գործի տեղից»,– ինքն իրեն ասաց նա ու համարյա քարացավ, մինչդեռ տոտիկները ավելի մեծ կայտառությամբ սկսեցին պար գալ: Մի պահ երկար լռություն տիրեց:

«Չեն բացում»,– ինքն իրեն ասաց Գրեգորը՝ ինչ-որ անհավանական հույսով համակված, սակայն հետո աղախինը իրեն հատուկ հաստատուն քայլերով մոտեցավ դռանն ու բացեց: Գրեգորին պետք էր

միայն լսել այցելուի ողջույնի առաջին բառը, և արդեն գիտեր, թե ով էր դա. անձամբ կառավարիչն էր եկել: Ինչո՞ւ պետք է Գրեգորին վիճակված լիներ այնպիսի ֆիրմայում ծառայել, ուր անգամ ամենաաննշան թերացման դեպքում անվստահության առավել մեծ դրսևորմանն էր արժանանալու: Ի՞նչ է, բոլոր ծառայողնե՞րն էին վերից վար քրջի կտորներ, մի՞թե նրանց մեջ հավատարիմ ու գործին նվիրված մարդիկ չկային, որ, ասենք, եթե անգամ առավոտվա մի քանի ժամը ի շահ ֆիրմայի օգտագործած չլինեին, խղճի խայթի զգացումից խելքները թռցնեին ու հենց իսկականից էլ ի վիճակի չլինեի՞ն անգամ մահճակալից վեր կենալ: Ավելի ճիշտ չէ՞ր լինի ինչ-որ մի աշկերտի հանձնարարել տեղեկանալ, եթե ընդհանրապես նման հարցուփորձն անհրաժեշտ էր: Պետք է անձամբ կառավարի՞չը վեր կենար գար, ու դեռ մի բան էլ բանից անտեղյակ ամբողջ ընտանիքին ի ցույց դրվեր, թե կասկածի տեղիք տված այս հարցով հենց մենակ կառավարչի հասկացողությունն էր պետք, որ վստահությո՞ւն լիներ: Եվ ավելի շուտ հուզված ապրումների, որ Գրեգորին հասցրել էր նման մտմտուքը, քան թե վերջնական վճռականության, նա իր բոլոր ուժերը գործի դնելով դուրս թռավ մահճակալից: Բավական բարձր շրխկոց ինչեց, բայց դա կատարյալ աղմուկ չէր դեռ: Գետնին բախվելու ձայնը ինչ-որ տեղ շնորհիվ գորգի մեղմացվեց, բացի դրանից պարզվեց, որ մեջքն ավելի ճկուն է, քան ինքը կարող էր ենթադրել, և դրա հետևանքով բոլորովին ուշադրություն չգրավող, խուլ թրմփոց լսվեց: Մենակ թե նա ոչ բավարար չափով էր զգույշ վարվել գլխի հետ ու հարված էր ստացել. հիմա ցավից ու զայրույթից շարժում էր գլուխն ու քսում այն գորգին:

– Լսեցի՞ք: Ներսում ոնց որ մի բան ընկավ,– ասաց կառավարիչը, որ ձախ կողմի սենյակում էր հիմա: Գրեգորը փորձեց պատկերացնել, թե արդյոք օրերից մի օր հենց այս կառավարիչի հետ էլ չէր կարող նման բան կատարվել, ինչ այսօր իրեն է պատահել. նման բանի հավանականությունը իսկապես պետք էր հաշվի առնել: Բայց որպես այս հարցի կոպիտ պատասխան կառավարիչը կողքի սենյակում մի քանի անգամ ինքնավստահ գնացեկավ, ու լսվեց, թե ինչպես են ճռճռում նրա լաքե կոշիկները:

– Գրեգոր, ձեր կառավարիչն է այստեղ,– եղբորը տեղյակ պահելու համար աջ կողմի սենյակից շշուկով խոսեց քույրը:

– Գիտեմ,– քթի տակ ասաց Գրեգորը, բայց այնպես, որ միայն քույրը հասկանար. չհամարձակվեց ավելի բարձր ձայնով խոսել:

– Գրեգոր:– Հիմա արդեն ձախ կողմի սենյակից հայրն էր խոսողը:– Անձամբ պարոն կառավարիչն է եկել ու ցանկանում է իմանալ, թե ինչն է պատճառը, որ դու ամենաառաջին գնացքով չես մեկնել: Մենք հիմա չգիտենք, թե ինչ պետք է ասենք նրան: Լսում ես, նա ցանկանում է անձամբ քեզ հետ խոսել: Այնպես որ, խնդրում եմ, բաց արա դուռը: Նա ըմբռնումով կմոտենա սենյակիդ թափթփված վիճակին ու ներողամիտ կլինի քո հանդեպ:

– Բարի լույս, պարոն Զամզա:– Հոր խոսելու ընթացքում բարձր ողջունեց կառավարիչը:

– Նա լավ չի զգում իրեն,– կառավարչին դիմեց մայրը, մինչ հայրը դեռ խոսում էր դռան մոտ կանգնած:– Նա իրեն լավ չի զգում, պարոն կառավարիչ: Բա էլ ինչ պետք է լիներ, որ հանկարծ Գրեգորը գնացքը բաց թողներ: Ախր մեր տղան այս գործից բացի ուրիշ ոչ մի բանով չի էլ հետաքրքրվում: Ես համարյա զայրանում եմ արդեն, որ նա երեկոները ոչ մի անգամ դուրս չի գալիս: Այս անգամ, այ, ութ օր է՝ քաղաքում էր, բայց ամեն իրիկուն տանն էր: Տեսեք, այ, նստում է այստեղ, սեղանի մոտ ու առանց ձայն հանելու իր թերթն է կարդում կամ գնացքների չվացուցակն է ուսումնասիրում: Անգամ երբ նրբասղոցի աշխատանքով է տարվում, արդեն դա է նրա համար ուշադրություն շեղող գործ: Ներսում կտեսնեք. երկու, թե երեք իրիկուն աշխատելու արդյունքում նա այսպիսի մի փոքր շրջանակ է պատրաստել: Ինքներդ էլ կզարմանաք, թե ինչքան գեղեցիկ գործ է: Ներսում է կախված, սենյակում: Հենց որ Գրեգորը դուռը բացի, դուք այն անմիջապես կնկատեք: Մի բան էլ ասեմ, պարոն կառավարիչ. օրինակ ես անչափ ուրախ եմ, պարոն կառավարիչ, որ դուք էլ եք այստեղ: Մենակ մենք որ լինեինք, չէինք կարողանա Գրեգորին ստիպել, որ բացի դուռը: Նա այնքան չոր բնավորություն ունի: Ես հավատացած եմ, որ նա իրեն լավ չի զգում, թեև առավոտյան մեզ հակառակն էր համոզում:

– Ես հենց հիմա գալիս եմ,– դանդաղ ու մտքերի մեջ թաղված խոսեց Գրեգորը և անշարժ մնաց, որ միջանցքի խոսակցությունից ոչ մի բառ բաց չթողներ:

– Այլ կերպ, ողորմած տիկին, ես ինձ չեմ էլ կարող բացատրել կատարվածը,– ասաց կառավարիչը:– Հուսով եմ, որ լուրջ բան չկա: Սակայն եթե մյուս կողմից էլ ասելու լինեմ, կարևոր չէ՝ բարեբախտաբար, թե դժբախտաբար, բայց մենք՝ գործի մարդիկս, անգամ եթե մի փոքր էլ մեզ լավ չզգանք, գործի ու աշխատանքի շահերից ելնելով՝ հաճախ պետք է պարզապես հաղթահարենք մեր տկարությունը:

– Հիմա ինչ ես ասում: Պարոն կառավարիչը կարո՞ղ է ներս մտնել քո սենյակը,– համբերությունը հատած խոսեց հայրը և կրկին թակեց դուռը:

– Ոչ,– ասաց Գրեգորը: Ձախ կողմի սենյակում ճնշող լռություն տիրեց, աջակողմյան սենյակում քույրը հեծկլտաց:

Ինչո՞ւ քույրը չէր գնում մյուսների մոտ: Հավանաբար նա միայն հիմա էր վեր կացել անկողնուց և նույնիսկ չէր էլ սկսել հագնվել: Բայց ի՞նչն էր նրա լացի պատճառը. որ ինքը վեր չէ՞ր կենում ու կառավարչին ներս չէ՞ր թողնում, որ հիմա իրեն սպառնում էր պաշտոնը կորցնելու վտա՞նգը, թե՞ որ հետո իր հիմիկվա շեֆը սկսելու էր իր հին պահանջներով անհանգստացնել ծնողներին: Այդ ամենը այս պահին իսկապես ավելորդ հոգսեր էին: Գրեգորը դեռ այստեղ էր և ամենևին էլ չէր մտածում ընտանիքից հեռանալու մասին: Հենց այս պահին նա պառկած էր հատակի գորգին, և ոչ ոք, որ տեղյակ կլիներ նրա վիճակին, ոչ ոք նրանից լրջորեն չէր պահանջի, որ նա ներս թողներ կառավարչին: Մինչդեռ այդ աննշան անքաղաքավարության պատճառով, ինչի համար ավելի ուշ հաստատ որևէ պատշաճ բացատրություն կգտնվեր, հո չէին կարող Գրեգորին հենց հիմա վերցնել ու վռնդել: Հիմա նրան թվում էր, որ շատ ավելի խելամիտ կլիներ իրեն հանգիստ թողնել, քան թե լաց լինելով ու հորդորելով խանգարել: Մինչդեռ հենց վիճակի անորոշությունն էր, որ մյուսներին ստիպում էր նման կերպ վարվել և արդարացնում էր իրենց պահվածքը:

– Պարոն Զամզա,– հիմա արդեն ձայնը բարձրացնելով խոսեց կառավարիչը:– Ինչի՞ նման է սա: Դուք բարիկադավորվել եք ձեր սենյակում, ընդամենը միայն «այո» և «ոչ» բառերով եք պատասխանում, ձեր ծնողներին ծանր ու ավելորդ հոգսեր եք պատճառում և, իմիջիայլոց ասեմ, անտեսում եք աշխատանքի հետ կապված սեփական պարտականությունները իսկապես չլսված մի ձևով: Այս պահին ես խոսում եմ ձեր ծնողների և ձեր շեֆի անունից և ամենայն լրջությամբ խնդրում եմ պարզ ու հստակ բացատրություն տալ: Զարմանում եմ: Զարմանում եմ: Ես այն կարծիքին եմ եղել, որ դուք հանգիստ մարդ եք, և ես ձեզ իբրև խելացի մարդ եմ ճանաչել, մինչդեռ հիմա դուք հանկարծ ցանկանում եք արտառոց կամակորությունների շքերթ սկսել: Ու թեև այսօր առավոտյան շեֆը ձեր զլանալու կապակցությամբ ինձ նման մի հավանական բացատրություն տրամադրել է, այն առնչվում է վերջերս ձեզ վստահված գանձումներին, բայց ես իսկապես պատրաստ էի ազնիվ խոսքով երդվել, որ այդ բացատրությունը դժվար թե իրականությանը համապատասխան լինի: Մինչդեռ հիմա տեսնում եմ ձեր անըմբռնելի համառությունը և այլևս բնավ որևէ ցանկություն ու մղում չունեմ նույնիսկ չնչին իսկ չափով ձեզ պաշտպանության տակ առնել: Մինչդեռ ձեր դրությունը չէի ասի, թե հաստատ ամենաապահովն է: Նախապես ես մտադրված էի այս ամենը ընդամենը մեր մեջ ասել ձեզ, բայց քանի որ դուք ինձ ստիպում եք հիմա իմ ժամանակը աննպատակ վատնել, ես չգիտեմ, թե ինչու նաև ձեր պարոնայք ծնողները չպետք է իմանան իրերի վիճակը: Վերջերս ձեր ձեռքբերումները խիստ անբավարար էին, ու թեև հիմա տարվա այն եղանակը չէ, որ առանձնահատուկ գործարքներ կատարվեն, մենք դա հասկանում ենք, բայց այնպիսի եղանակ գոյություն չունի, որ բոլորովին գործարք չկատարվի, պարոն Զամզա, չի կարող գոյություն ունենալ:

– Բայց, պարոն կառավարիչ,– ինքնատիրապետումը կորցրած բղավեց Գրեգորն ու իր հուզված վիճակում մոռացավ ամեն ինչ,– ես անմիջապես, հենց այս պահին բաց կանեմ: Թեթևակի վատ զգալն էր պատճառը, գլխապտույտի նոպա էր, որ խանգարում էր ինձ վեր կենալ: Ես դեռ հիմա էլ

անկողնում եմ պառկած, թեև այս պահին արդեն ինձ նորից միանգամայն կայտառ եմ զգում: Այ, այս պահին ես ելնում եմ անկողնուց: Ընդամենը մի կարճ պահ համբերություն է պետք: Այնքան էլ լավ չեմ, ինչպես ենթադրում էի, բայց արդեն վատ չեմ: Ինչպե՛ս է պատահում, որ ընդհանրապես մարդկանց հետ նման բաներ են կատարվում: Դեռ երեկ երեկոյան ես ինձ կատարյալ լավ էի զգում, ծնողներս էլ են տեղյակ դրան, կամ ավելի լավ կլինի ասեմ, որ դեռ երեկ երեկոյան ես նման բան աղոտ ենթադրում էի: Իմ տեսքից էլ պետք է որ դա նկատելի լիներ: Չե՛մ էլ հասկանում, թե ինչու այդ մասին տեղյակ չպահեցի ֆիրմայում: Բայց ախր մարդ միշտ մտածում է, թե կարող է տկարությունը առանց տանը մնալու էլ հաղթահարել: Պարո՛ն կառավարիչ: Խղճացե՛ք ծնողներիս: Այդ բոլոր նախատինքների համար, որ հիմա տալիս եք ինձ, ախր որևէ հիմք չկա: Այդ ամենի մասին ինձ ախր ոչ մի բան չեք ասել: Դուք հավանաբար չեք ծանոթացել վերջին առաջարկներին, որ ես եմ ուղարկել: Մի բան էլ ասեմ, այ հենց ժամը ութի գնացքով էլ ես ճանապարհ կընկնեմ. այս մի քանի ժամ հանգստանալը ինձ կազդուրեց: Միայն թե դուք այստեղ ժամանակ մի վատնեք, պարոն կառավարիչ: Ես էլ անմիջապես ֆիրմա կներկայանամ, միայն բարի եղեք այս ամենը ասեք ու իմ մասին բարեխոսեք պարոն շեֆի մոտ:

Ու մինչ Գրեգորը այս ամենը շտապ-շտապ ասում էր ու հազիվ էր հասկանում, թե ինչ էր խոսում, հավանաբար մահճակալի մեջ ձեռք բերված ունակության շնորհիվ շատ հեշտ մոտեցել էր պահարանին ու հիմա ընդամենը փորձում էր դրան հենվելով ուղղվել: Նա իսկապես էլ ուզում էր

բացել դուռը, իսկապես ուզում էր, որ իրեն տեսնեն, ուզում էր կառավարչի հետ խոսել: Նրա միակ ցանկությունն էր իմանալ, թե մյուս մարդիկ, որ հիմա պահանջում էին իրենից դուրս գալ, ինչ կասեին իրեն տեսնելուց հետո: Եթե հանկարծ սահմռկեին, ապա Գրեգորն այլևս որևէ հարցում պատասխանատու չէր ու կարող էր հանգիստ լինել: Մինչդեռ եթե ամեն ինչ հանգիստ ընդունեին, ապա ինքը ևս որևէ հիմք չէր ունենա անհանգստանալու համար, ու եթե իսկապես շտապեր, ապա հաստատ կկարողանար ժամը ութին լինել կայարանում: Սկզբում նա ողորկ պահարանի փեղկից մի քանի անգամ սահեց վար, սակայն ի վերջո մի անգամ էլ թափ առավ ու ուղիղ կանգնեց. մարմնի ներքևի հատվածում զգացած ցավերի վրա այլևս ուշադրություն չէր դարձնում, թեև դրանք իսկապես այրող զգացողություն էին պատճառում: Նրան հաջողվեց մոտ դրված աթոռի թիկնակին ընկնել, ինչի եզրերից կառչեց իր տոտիկներով: Այդ դիրքով նա կարողացավ տիրապետել իր վիճակին ու լռեց այլևս, որովհետև հիմա արդեն կարող էր կառավարչին լսել:

– Դուք ինքներդ որևէ բառ հասկացա՞ք ասվածից,– ծնողներին հարցրեց կառավարիչը:– Ի՞նչ է, հիմարի տե՞ղ է դնում մեզ:

– Ի սե՛ր Աստուծո,– բացականչեց մայրը, որ արդեն պատրաստ էր լաց լինել:– Նա գուցե ծանր հիվանդ է, մինչդեռ մենք տանջում ենք նրան: Գրե՛տա, Գրե՛տա,– ձայն տվեց մայրը:

– Մայրի՞կ,– հակառակ կողմից արձագանքեց քույրը: Նրանք Գրեգորի սենյակի հակառակ կողմերում էին:

– Հենց հիմա վազիր բժշկի հետևից: Գրեգորը հիվանդ է: Արագ վազիր բժիշկ կանչելու: Լսեցի՞ր, թե ինչպես էր նա խոսում:

– Բայց դա ինչ-որ կենդանու ձայն էր,– ասաց կառավարիչը: Ի տարբերություն մոր, նա զգալիորեն կամաց էր խոսում:

– Ա՛ննա, Ա՛ննա,– միջանցքով մեկ խոհանոցի ուղղությամբ կանչեց հայրն ու բարձր ծափ զարկեց:– Անմիջապես որևէ փականագործի կանչիր:

Լսվեց, թե հիմա ինչպես երկու աղջիկները, զգեստների փեշերը խշխշացնելով, այսուայնկողմ նետվեցին միջանցքում: Քույրն այդ ինչպես էլ

հասցրել էր այդքան արագ հագնվել: Նրանք շտապ բացեցին բնակարանի դուռը: Դուռը փակվելու ձայն չլսվեց. հավանաբար բաց էին թողել, ինչը սովորական բան էր այն բնակարանների համար, ուր մեծ դժբախտություն էր պատահել:

Մինչդեռ Գրեգորն արդեն շատ ավելի էր հանգստացել: Ու թեև հիմա էլ նրա խոսքերը բոլորովին չէին հասկացվում, սակայն դրանք նրան բավական հասկանալի, ավելի հասկանալի էին թվում, քան առաջ էր, և դա հավանաբար այն պատճառով էր, որ ականջը սովորել էր արդեն: Եվ այնուամենայնիվ հիմա արդեն տան մեջ սկսել էին մտածել, որ նրա հետ ամեն ինչ չէ, որ կարգին է, և պատրաստ էին օգնել նրան: Այն վստահությունն ու հավատը, ինչպես որ առաջին կարգադրություններն էին արվել, նրան գոհացնում էին: Նա իրեն նորից մարդկանց խմբի մեջ ներգրավված էր զգում և երկուսից էլ՝ ինչպես բժշկից, այնպես էլ փականագործից, անչափ մեծ ու անակնկալ արդյունքներ էր ակնկալում, թեև իրականում նրանց իրարից այնքան էլ չէր տարբերում: Սպասվող կարևոր քննարկումների ժամանակ հնարավորին չափ պարզ ձայն ունենալու համար նա մի փոքր հազաց՝ իհարկե ջանք թափելով, որ դա միանգամայն զուսպ անի, որովհետև անչափ հավանական էր, որ անգամ այդ աղմուկն էր այլ կերպ հնչում, քան մարդկային հազն էր, իսկ ինքն արդեն այլևս չէր վստահում իրեն, թե արդյոք կարող է դրանք տարբերակել: Այդ ընթացքում կողքի սենյակում կատարյալ լռություն էր տիրում: Հավանական է, որ ծնողները կառավարչի հետ նստել էին սեղանի մոտ ու փսփսում էին, հավանական է՝ կանգնած էին դռան մոտ ու ականջ էին դնում: Գրեգորը, աթոռին կառչած, դանդաղ հրվեց դեպի դուռը, այնտեղ բաց թողեց աթոռը, ընկավ դռան վրա ու, կառչելով, ուղիղ պահեց իրեն (նրա տոտիկների բշտիկները որոշակի կպչուն նյութ էին պարունակում) ու մի երկար պահ հանգիստ առավ լարվածությունից: Ապա նա անցավ բանալին բերանի մեջ հարմարեցնելուն և այդպես փորձեց այն փականի մեջ պտտեցնել: Ցավոք, պարզ դարձավ, որ ինքը ոչ մի իսկական ատամ չունի,– հիմա ինչպես էր բանալին պահելու,– մինչդեռ փոխարենը

ծնոտներն էին իսկապես բավական ուժեղ, և դրանց օգնությամբ էլ նրան իրականում հաջողվեց շարժման մեջ դնել բանալին՝ առանց ուշք դարձնելու, որ դրանով, անշուշտ, ինչ-որ վնաս պատճառեց իրեն, որովհետև բերանից մուգ գույնի հեղուկ հոսեց, ճիրվեց բանալու վրայով ու կաթիլ-կաթիլ ընկավ հատակին:

– Լսեք հապա,– կողքի սենյակում արձագանքեց կառավարիչը:– Նա բանալին է պտտեցնում:

Գրեգորի համար այս խոսքերն անչափ մեծ քաջալերանք էին: Բայց նրան պետք էր, որ բոլորը ձայն տային իրեն, նաև հայրն ու մայրը: «Ավելի՛ համարձակ, Գրեգոր,– պետք է կանչեին նրանք,– ավելի՛ ուժեղ, ձի՛գ պահիր քեզ»:

Եվ պատկերացնելով, որ բոլորն են լարված սպասում իր գործադրած ջանքերին, եղած ամբողջ ուժով, ցնորվածի նման կառչեց բանալուց: Բանալին պտտեցնելու առաջխաղացումից կախված՝ նա պար էր գալիս ու պտտվում էր փականի շուրջը. հիմա արդեն, միայն ատամներով կառչած, իրեն ուղիղ էր պահում, և, դրությունից կախված, կամ կառչում էր բանալուց, կամ էլ մարմնի ամբողջ ծանրությունը կիրառելով ներքև էր սեղմում այն: Վերջի-վերջո ետ պտտեցված փականի զրնգուն



շրխկոցը իսկապես սթափեցրեց Գրեգորին: Խոր շունչ քաշելով՝ մրմնջաց. «Ուրեմն ինձ փականագործի օգնությունը պետք չէր»: Դրանից հետո գլուխը սեղմեց բռնակին, որ այդպես կարողանար մինչև վերջ բացել դռները:

Քանի որ նա իրականում միայն այս կերպ էր ի վիճակի բացել դուռը, այն արդեն բավականաչափ բաց էր, մինչդեռ ինքը դեռ չէր երևում: Նրան հարկավոր էր միայն դանդաղ շրջանցել դռան փեղկը, անչափ մեծ զգուշություն էր հարկավոր գործի դնել, եթե չէր ցանկանում սենյակ մտնելուց առաջ թրմփալով փռվել թիկունքի վրա: Նա իրենից ճիգ ու ջանք պատճառող այդ գործողությամբ էր զբաղված, ժամանակ չուներ ուրիշ բաների վրա ուշադրություն դարձնելու, մեկ էլ լսեց, թե ինչպես կառավարիչը բարձր ձայնով «Օh» աղաղակեց, և դա այնպես ինչեց, կարծես քամի ներս թափանցեց. հաջորդ պահին Գրեգորը նրան էլ տեսավ, տեսավ, թե ինչպես է նա, որ ամենամոտն էր դռանը, ձեռքը սեղմեց բաց մնացած բերանին ու դանդաղ ետ ընկրկեց, ասես անտեսանելի մի ուժ համառորեն ետ է քաշում նրան: Մայրը, կառավարչի ներկայությունն այստեղ անտեսելով, կանգնել էր դեռ գիշերվանից հերարձակ, ցից-ցից մազերով, ու հիմա նախ ձեռքերը ծալած նայեց հոր կողմը, ապա երկու քայլ արեց դեպի Գրեգորը և, դեմքը կրծքին թաղած, փլվեց ոտքերի արանքում ու տակը շուլալված զգեստների մեջ: Թշնամական տրամադրվածությամբ հայրը բռունցք արեց ձեռքը, կարծես ցանկանում էր խփել Գրեգորին ու ետ շպրտել իր սենյակը, ապա անվստահ աչք ածեց սենյակը, ձեռքերը սեղմեց աչքերին ու այնպես լաց եղավ, որ հզոր կուրծքը ցնցվեց:

Գրեգորն այլևս սենյակ չմտավ, այլ ներսի կողմից հենվեց դռան լռված փեղկին, և հիմա միայն նրա մարմնի կեսն էր երևում, ու դրա վերևում կողքի թեքված գլուխն էր, և նա այդպես նայում էր ներսում գտնվողներին:

Այդ ընթացքում արդեն բավական լուսացել էր. փողոցի դիմացի կողմում պարզ ու հստակ երևում էր հիվանդանոցի մոխրասև շենքի երկար, անվերջանալի երկար մի երիզը և դրա պատերի մեջ կոպիտ բացվածքով նայող պատուհանների շարքը. անձրևը դեռ մաղում էր, բայց հատ-հատ,

առանձին-առանձին երևացող և իսկապես էլ այդպես հատ-հատ կաթիլնե-րով գետնին զարկվող կաթիլներով: Նախաճաշի սպասքը պահանջվածից ավելի մեծ քանակով ծածկել էր սեղանը, որովհետև Գրեգորի հոր համար նախաճաշն էր օրվա ամենակարևոր սնունդը, ինչը նա տարբեր ուղղվածու-թյան թերթերի ընթերցանությամբ ժամեր շարունակ ձիգ էր տալիս:

Հենց դիմացի պատին Գրեգորի լուսանկարներից մեկն էր կախված. նրա զինվորական ծառայությունից էր: Այնտեղ նա լեյտենանտի համա-զգեստով էր, ձեռքը դաշույնի կոթին հենած, անհոգ ժպտալով հարգանք էր կորզում իր կեցվածքի ու համազգեստի հանդեպ: Միջանցք տանող դուռը բաց էր, ու որովհետև նաև բնակարանի դուռն էր բաց, մուտքի դիմացի հարթակից բացի նաև երևում էր ներքև տանող աստիճանների մոտակա հատվածը: թվագրել ս 1915.-ին հետո կամ մ

– Եվ ինչ,– ասաց Գրեգորն ու իր տեսքով ցույց տվեց, որ այստեղ հիմա ինքը միակն է, որն անվրդով է պահում իրեն:– Հիմա ես առանց ժամանակ կորցնելու կհագնվեմ, կհավաքեմ կտորեղենի նմուշներն ու կմեկնեմ: Դուք հո չեք առարկում, որ ես մեկնեմ: Դե, պարոն կառավարիչ, տեսնում եք, չէ՞, որ ես պնդաճակատ չեմ, որ ես հաճույքով եմ աշխատում: Ճիշտ է, ճամփորդելը բավական բարդ ու հոգնեցուցիչ գործ է, բայց ես առանց այդ աշխատանքի չեմ կարողանա ապրել: Այդ ո՞ւր եք գնում, պարոն կառավարիչ: Գործի՞: Հա՞: Այստեղ կատարված ամեն ինչը ինչպես որ կա, ճշմարտացի կներկայացնե՞ք: Կարող է այնպես ստացվել, որ մարդ ինչ-որ դրության մեջ չկարողանա աշ-խատել, բայց ախր հենց այդ պահին է հարկավոր հիշել ու մտաբերել, որ դրանից հետո, երբ այլևս բոլոր դժվարություններն ու արգելքները հաղթա-հարված լինեն, նա իհարկե ավելի մեծ եռանդով ու ավելի ուշադիր կաշխա-տի: Ես լավ գիտեմ, որ մեր շեֆին անչափ շատ բան եմ պարտական, և դա դուք էլ բավական լավ գիտեք: Բայց մյուս կողմից էլ ես պարտավոր եմ հոգ տանել ծնողներիս ու քրոջս: Ես հիմա նեղ դրության մեջ եմ, բայց ես հաս-տատ դուրս կգամ այս վիճակից: Միայն թե այդ բանն անելը ինձ համար ավելի ծանր ու անտանելի մի դարձրեք, քան է իրականում: Ֆիրմայում որ

լինեք, պաշտպանեք ինձ: Ես տեղյակ եմ, որ շրջիկ գործակատարներին չեն սիրում: Մտածում են, թե հիմա ես դեզերով փողեր եմ վաստակում, եսիմինչ պուպուշ-պուպուշ կյանք եմ քաշում: Այդպես մտածողները իրենց սեփական կարծիքները վերանայելու անհրաժեշտություն չեն տեսնում, մինչդեռ դուք, պարոն կառավարիչ, ախր դուք շատ ավելի լավ գիտեք, թե ինչն ինչոց է, քան մեզ հետ աշխատող մյուսները, և եթե ուզում եք անկեղծ իմանալ, ավելի քաջատեղյակ եք, քան հենց մեր շեֆը, որը ձեռներեց մարդ լինելու իր հատկանիշով պայմանավորված՝ հաճախ է ոչ ի շահ իր մոտ աշխատող ծառայակցի սխալ թույլ տալիս: Բացի դրանից ինքներդ էլ շատ լավ գիտեք, որ շրջիկ գործակատարը, որ համարյա թե կլոր տարին ֆիրմայից դուրս է գտնվում, ինչպիսի հեշտությամբ կարող է զոհ դառնալ տարբեր բամբասանքների, պատահականությունների ու անհիմն բարդությունների, դրան գումարած այն, որ նա միանգամայն անկարող է դրանց դեմն առնել, որովհետև շատ հաճախ ոչինչ էլ չի իմանում դրանց մասին, և միայն ամենավերջում է իրենց առաջացրած պատճառների հարցում այլևս պարզության չտրվող հետևանքների զանգվածը սեփական մաշկի վրա զգում, երբ հոգնած ու դադրած ավարտում է շրջագայությունն ու տուն է դառնում: Պարոն կառավարիչ, մի հեռացեք առանց ինձ որևէ մի բան ասելու, ինչը ցույց կտա, որ գոնե նվազագույն իսկ չափով դուք իրավացի եք համարում ինձ:

Սակայն կառավարիչը Գրեգորի խոսել սկսելու հենց առաջին պահից էր շուռ եկել ու ցնցվող ուսի վրայով, բերանը լայն բաց արած, հետևում էր նրան: Ու մինչ Գրեգորը խոսում էր, նա մի ակնթարթ անգամ հանգիստ չէր կանգնել, այլ, առանց Գրեգորին աչքից բաց թողնելու, ընկրկում էր դեպի դուռը, բայց դանդաղ, կարծես թե սենյակը լքելու վերաբերյալ գաղտնի մի արգելք կար: Նա արդեն միջանցքում էր, և դատելով այն հանկարծակի շարժումից, որով նա ոտքը քաշեց հյուրասենյակից, կարելի էր կարծել, թե նրա հագած կոշիկի ներբանն էր այրվում: Միջանցքում, սակայն, նա աջ ձեռքը այնպես պարզեց առաջ, դեպի աստիճանները, կարծես այդտեղ նրան հենց այն է վերերկրային մի փրկություն էր սպասում:

Գրեգորը զգաց, որ ինքը ոչ մի դեպքում իրավունք չուներ թույլ տալու, որ կառավարիչը նման տրամադրությամբ հեռանար այստեղից, որովհետև դա կարող էր ծայրահեղ ծանր վնաս հասցնել ֆիրմայում ունեցած իր դիրքին: Ծնողներն այդ պահը ինչպես հարկն է չընկալեցին, այս երկար ու ձիգ տարիների ընթացքում նրանց մոտ այն համոզմունքն էր ձևավորվել, թե Գրեգորի կյանքը իր աշխատած ֆիրմայի մեջ ապահովված է, և իրենց առօրյա հոգսերով տարված՝ այնքան անելիք էին գտել իրենց համար, որ հեռուն տեսնելու ամեն տեսակի ունակություն կորցրել էին: Բայց Գրեգորն ամեն ինչ հստակ էր տեսնում. կառավարչին հարկավոր էր պահել, հանգստացնել էր հարկավոր, համոզել ու իր կողմը գրավել. Գրեգորի ապագան, իրենց ամբողջ ընտանիքի ապագան հենց դրանից էր կախված: Ա՛յ թե քույրը հիմա այստեղ լիներ: Նա խելացի աղջիկ էր, մինչ Գրեգորը պառկած էր սենյակում մեջքի վրա փռված, քույրը լաց էր լինում: Գրեգորը վստահ էր, որ իրենց կառավարիչը՝ այդ կանանց հաճոյացողը, բացառված է, որ հանկարծ քրոջը չենթարկվեր: Քույրը կկարողանար փակել բնակարանի դուռն ու միջանցքում կառավարչին կհամոզեր, որ սարսափելի ոչինչ չի եղել: Բայց այս պահին քույրն այստեղ չէր, այնպես որ Գրեգորն ինքը պետք է մի բան աներ: Եվ առանց այն բանի մասին մտածելու, թե ինքը բնավ չի տիրապետում շարժվելու իր ներկայիս կարողությանը, առանց նույնիսկ այն մասին մտածելու, թե իր խոսքերը հնարավոր է և նույնիսկ շատ հավանական է, որ նորից



անհասկանալի են մնացել, նա բաց թողեց դռան փեղկը, դռան բացվածքի միջով մղվեց առաջ, ցանկություն ուներ կառավարչի ուղղությամբ շարժվել. սա արդեն կանգնել էր հարթակի ճաղավանդակից երկու ձեռքով պինդ բռնած, ու ծիծաղելի էր նրա կերպարանքին նայելը, բայց հենց հաջորդ պահին կարճ ճիչ արձակելով, ապարդյուն որևէ հենարան փնտրելով՝ Գրեգորը փռվեց բազմաթիվ ու բարակ տոտիկների վրա: Հազիվ էր դա պատահել, այդ առավոտվանից սկսած նա առաջին անգամ մարմնական լավ ինքնազգացողություն ունեցավ. տոտիկների տակ ամուր գետինն էր, նրանք առանց հակառակվելու ենթարկվում էին իրեն, ինչպես ինքը ի գոհունակություն իրեն նկատեց՝ դրանք մինչև անգամ շտապում էին իրեն առաջ շարժել, տանել այնտեղ, ուր ինքը կուզենար. և արդեն ենթադրում էր, թե բոլոր տեսակի ցավ ու տառապանքի վերջնական փարատումը անմիջապես հիմա կսկսվի: Բայց նույն պահին, երբ նա, զուսպ շարժման ազդեցության տակ ճոճվելով, մորից ոչ այնքան հեռու և անմիջապես նրան դեմ հանդիման պառկած էր հատակին, մայրը, որ թվում էր, թե նստել է ամբողջովին ինքն իր մեջ պարփակված, միանգամից վեր ցատկեց, մատները չռած, ձեռքերը լայն տարածած աղաղակեց. «Օգնեցեք, Աստուծո սիրուն, օգնեցեք», գլուխը խոնարհեց՝ կարծես թե այդ դիրքով ուզում էր ավելի լավ զննել Գրեգորին, սակայն, հակառակ դրա, խելակորույս ետ վազեց. մտքից թռցրել էր, որ իր թիկունքում սպասքով ծանրաբեռնված սեղանն էր, ու երբ զգաց, որ դրան դեմ առավ, կարծես ցնորված լիներ, հապճեպ նստեց դրա վրա, ու թվում էր, թե բոլորովին էլ չնկատեց, որ իր կողքին շուռ եկած սուրճի մեծ ամանից սուրճն ամբողջությամբ հոսեց հատակի գորգին:

– Մայրիկ, այ մայրիկ,– կամացուկ արտաբերեց Գրեգորը և նայեց վերև, նրա կողմը:

Կառավարիչը մի պահ բոլորովին վերացել էր նրա մտքից, մինչդեռ նա չէր կարող բռնանալ իր վրա, որ հատակի վրա թափվող սուրճի տեսքից ծնոտներով մի քանի անգամ չծամծմեր օդը: Այդ տեսարանից սարսափած մայրը նորից աղաղակեց, փախավ սեղանի մոտից ու նետվեց իր կողմը

շտապող հոր գիրկը: Մինչդեռ Գրեգորն այս պահին ոչ մի րոպե ժամանակ չուներ ծնողների հետ զբաղվելու համար. կառավարիչն արդեն կանգնել էր աստիճանների եզրին. ծնոտը ճաղավանդակին հենած՝ նա մի վերջին հայացք նետեց բնակարանի կողմը: Գրեգորը թափ առավ, որ կարողանար հնարավորինս անվնաս հասնել նրան: Կառավարիչը հաստատ նման բան ենթադրել էր, որովհետև նա լայն թռիչքով ցատկեց մի քանի աստիճանի վրայով ու անհետացավ: «Հո՜ւուհ»,– այնպես բացականչեց նա, որ ձայնն աղաղակով տարածվեց ամբողջ սանդղատնով մեկ: Ցավն այն էր, որ մինչև այս պահը իրեն համեմատաբար ավելի զուսպ պահած հայրը, կառավարչի շուտափույթ փախուստի տպավորության տակ, կարծես միանգամայն կորցրեց իրեն ու փոխանակ կառավարիչի հետքով նետվեր և կամ Գրեգորին չխանգարեր նրա հետևից շտապելու մտադրության ժամանակ, աջ ափի մեջ սեղմեց կառավարչի ձեռնափայտը, որ սա էր իր գլխարկի ու անթևանոցի հետ մեկտեղ մոռացել նստած աթոռին, ձախ ձեռքով սեղանի վրայից վերցրեց մեծ թերթն ու ոտքերով հատակը դոփելով սկսեց Գրեգորին, ձեռնափայտը ճոճելով ու բռի մեջ հավաքած թերթը թափ տալով, իր սենյակը քշել: Գրեգորի աղաչանք-պաղատանքը չօգնեց, ավելին, ոչինչ չհասկացվեց նրա ասածից. նա որքան էլ խեղճացած ծռեր գլուխը, հայրը, միևնույնն է, ավելի ուժեղ էր ոտքերով դոփում հատակը: Բնակարանի մյուս կողմում մայրը, չնայած ցուրտ եղանակին, լայն բացել էր պատուհաններից մեկը և այդպես դուրս կախված՝ դեմքը սեղմել էր ափերի մեջ: Փողոցի ու սանդղատան միջև շատ ուժեղ միջանցիկ քամի բարձրացավ, պատուհանի վարագույրները ճախրեցին դուրս, սեղանի վրա լրագրերն աղմուկով պար եկան, առանձին թերթեր ճոճվելով իջան հատակին: Հայրն անողոքաբար քշում էր Գրեգորին ու վայրենու պես ֆշշացնող հնչյուններ արձակում: Մինչդեռ Գրեգորը բնավ վարժված չէր ետ-ետ գնալու մեջ, և դա իսկապես դանդաղ ընթացք էր: Եթե Գրեգորին ընդամենը թույլ տրվեր շրջվել, նա անմիջապես կհայտնվեր իր սենյակում, մինչդեռ նա վախենում էր, որ շրջվելու պատճառով անհրաժեշտ ժամանակի կորստից հայրը կարող էր անհամբերություն ցուցաբերել, իսկ

դրա հետ կապված վտանգն այն էր, որ ամեն վայրկյան հայրը կարող էր մահացու հարված հասցնել նրա մեջքին կամ գլխին: Ի վերջո Գրեգորին ուրիշ ոչինչ չմնաց, որովհետև նա, խուճապի մատնված, նկատեց, որ ետ-ետ գնալու ժամանակ նույնիսկ անկարող էր ուղղությունը ճիշտ պահել, այնպես որ սկսեց շարունակ հոր կողմը վախվորած, շեղակի հայացքների հետ մեկտեղ հնարավորին չափ արագ, իրականում սակայն անչափ դանդաղ շրջվել: Հայրը հավանաբար հասկացավ նրա բարի մտադրությունը, որովհետև այդ ընթացքում այլևս դադարեց խանգարել նրան, այլ ընդամենը միայն հեռվից ձեռնափայտի օգնությամբ ուղղություն էր ցույց տալիս: Մենակ թե նրա այդ անտանելի ֆշշոցը չլիներ: Դրա պատճառով Գրեգորն ամբողջովին կորցրել էր գլուխը: Նա համարյա արդեն բարեհաջող շրջվել էր, երբ շարունակ այդ ձայներին ականջ դրած՝ նույնիսկ շփոթվեց ու դեռ մի բան էլ հակառակ ուղղությամբ գնաց: Իսկ երբ արդեն նրան հաջողվել էր շուռ գալ գլխով դեպի դռան բացվածքը, պարզվեց, որ մարմինը շատ ավելի լայն էր, որ նա կարողանար առանց դժվարության ներս մտներ: Իր ներկայիս տրամադրության մեջ, իհարկե, հոր մտքով ամենևին էլ չանցավ, որ գոնե դռան փեղկերից մեկը բացեր ու Գրեգորի համար բավական լայն բացվածք ապահովեր: Հայրը միայն մի սևեռուն գաղափար ուներ. Գրեգորը պարտավոր էր ինչքան հնարավոր է արագ իր սենյակը վերադառնալ: Հայրը ոչ մի գնով անգամ չէր հանդուրժի Գրեգորին անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքը, որ նա կարողանար հարմար դիրքով կանգնել ու գուցե այդպես դռան միջով անցներ: Ավելի շուտ նա, որոշակի աղմուկի տակ, Գրեգորին քշում էր առաջ, և դա նրա թիկունքում այլևս չէր հնչում որպես իր հոր մենակ ու միայնակ ձայն: Այս պահից սկսած այլևս ոչ մի կատակ չէր կարող լինել, ու Գրեգորը սեղմվեց դռան մեջ. թող ինչ ուզում է լինի: Նրա մարմնի մի կողմը բարձրացավ, ինքը շեղակի լռվեց դռան բացվածքի մեջ, մի կողը վերքոտ քերվեց, դռան սպիտակ փեղկի մակերևույթին նողկանք հարուցող հետքեր հայտնվեցին: Այդպես որ շարունակվեր, նա անշարժ կլռվեր-կմնար ու չէր էլ կարողանա շարժվել: Մի կողմում տոտիկները թարթափելով կախ էին ընկել

օդի մեջ, մյուս կողմում դրանք սեղմվել էին հատակին ու ցավ էին պատճառում, և այդ վիճակի մեջ հայրը թիկունքի կողմից իսկապես փրկություն բերող ուժեղ քացի հասցրեց, և նա, սաստիկ արյունահոսելով, լայնքով մեկ թռավ իր սենյակը: Դուռը ձեռնափայտով վրա բերվեց, ու վերջապես բնակարանում անդորր իջավ:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Միայն երեկոյան աղջամուղջի հետ Գրեգորն արթնացավ իր ծանր, ուշաթափություն հիշեցնող քնից: Անշուշտ, եթե նրան անգամ չխանգարեին, նա ինքը շուտով արթնանալու էր, որովհետև իրեն արդեն բավականաչափ հանգստացած ու քունն առած էր զգում, մինչդեռ նրան թվում էր, թե իրեն այնուամենայնիվ քայլերի հապճեպ ձայնն ու միջանցք տանող դռան զգույշ փակվելը արթնացրին:

Փողոցի էլեկտրական լամպերի լույսը այսուայնտեղ գունատ երիզներ էր կազմել սենյակի առաստաղի և կահույքի վերևի մասերի վրա, մինչդեռ ներքևում, ուր Գրեգորն էր, մութ էր: Նա նոր-նոր էր սկսելու վարժվել իր տոտիկներին, և դրանք առայժմ անսովոր կերպով շարժելով՝ նա հրեց իր մարմինը դռան կողմը, որ ստուգեր, թե ինչ էր կատարվել այնտեղ: Նրա ամբողջ ձախ կողմը մի ընդհանուր, երկար ձգված ու տհաճ վերքի սպի էր հիշեցնում, և նա իր երկշար տոտիկներով ինչպես հարկն է կաղում էր: Տոտիկներից մեկն, ի դեպ, ճաշից առաջ տեղի ունեցած դեպքերի պատճառով ծանր հաշմվել էր, և համարյա հրաշք էր, որ միայն դա էր վնասվել և անկենդան քարշ էր գալիս:

Երբ հասավ դռան մոտ, միայն այդտեղ հասկացավ, թե ինչն էր իրեն այդ կողմը գրավել. ուտելիքի հոտն էր: Այդտեղ քաղցր կաթով լի մի թաս էր դրված, կաթի երեսին էլ սպիտակ հացի փոքր պատառներ էին լողում: Ուրախությունից նա քիչ էր մնում ծիծաղեր, որովհետև հիմա արդեն ավելի էր սովածացել, քան առավոտյան էր, ու նա գլուխն իսկույն, համարյա աչքերն էլ հետը, թաղեց կաթի մեջ: Բայց անմիջապես էլ հիասթափված

հանեց թասից. ոչ միայն, որ սնվելն իրեն ցավ հասցրած ձախ կողմի պատճառով դժվարությամբ էր հաջողվում, մինչդեռ նա կարողանում էր սնվել, երբ ամբողջ մարմինն էր փնչոցով իր մասնակցությունը բերում, այլև որովհետև կաթը, որ ընդհանրապես իր սիրած բանն էր եղել, և որը հաստատ քույրն էր դրել սենյակում, դադարել էր դուր գալ նրան. և նա իրոք զզվանքով շուռ եկավ թասից ու ետ սողաց մինչև սենյակի կենտրոնը:

Հյուրասենյակում, ինչպես Գրեգորը դռան փեղկերի արանքից տեսավ, գազի լապտերը վառել էին, ու թեև սովորաբար հայրը ճաշից հետո տպագրվող իր թերթն էր բարձր ձայնով կարդում մոր, երբեմն նաև քրոջ համար, այս պահին ոչ մի ձայն չէր լսվում: Հավանաբար այդ ընթերցումը, ինչի մասին քույրն էր շարունակ պատմում իրեն և գրում, վերջին ժամանակներում ընդհանրապես դուրս էր եկել կիրառությունից: Բայց ախր շրջակայքում էլ էր անսովոր լռություն տիրում, թեև տունն, իհարկե, բնավ դատարկ չէր:

«Ինչ խաղաղ ու հանգիստ կյանքով էր ապրում մեր ընտանիքը»,– մրմնջաց Գրեգորը և երբ անթարթ հայացքով նայում էր մթության մեջ, մեծ հպարտություն զգաց, որ ինքն էր կարողացել ծնողների ու քրոջ համար այդպիսի կյանք ապահովել նման մի գեղեցիկ բնակարանում: Մինչդեռ հիմա այնպես էր ստացվելու, որ ամբողջ հանգիստ կյանքը, բարեկեցությունը, ողջ գոհունակությունը այսպիսի սարսափելի ավարտ էր ունենալու: Այդ-օրինակ մտքերի մեջ չխճճվելու համար Գրեգորը գերադասում էր շարժվել և սենյակի ներսում ետ ու առաջ էր սողում: Ամբողջ երկար երեկոյի ընթացքում մի անգամ կողքի սենյակ տանող դռներից մեկը բացվեց մի նեղ ճեղքի չափով, ապա մյուսը, բայց դրանք իսկույնևեթ նորից փակվեցին. երևի ինչ-որ մեկը ներս մտնելու պահանջ էր զգացել, բայց հետո, անհայտ պատճառներով, մտափոխ էր եղել:

Գրեգորը կանգ առավ անմիջապես դռան մոտ. հաստատ որոշել էր այդ վարանոտ այցելուին ինչ-որ եղանակով ներս մտցնել կամ գոնե իմանալ, թե ով էր դա: Սակայն դուռն այլևս չբացվեց, և Գրեգորի սպասելն

արդեն իզուր էր: Առավոտյան, երբ դռները փակ էին, բոլորն էին ցանկանում ներս մտնել նրա մոտ, մինչդեռ հիմա, երբ դռներից մեկը ինքն էր բացել, իսկ մյուսը, ակնհայտորեն, օրվա ընթացքում էին բացել, այլևս ոչ ոք չէր գալիս, իսկ փականների բանալիներն էլ հաստատ արդեն դրսի կողմից էին մտցված:

Ուշ գիշեր էր արդեն, երբ անջատվեց հյուրասենյակի լույսը, այնպես որ հեշտությամբ կարելի էր կռահել, որ ծնողներն ու քույրն այդքան երկար արթուն էին մնացել, մինչդեռ հիմա կարելի էր անսխալ լսել, թե ինչպես էին երեքն էլ ոտքերի թաթերի վրա հեռանում:

Հիմա արդեն այլևս հաստատ մինչև առավոտ որևէ մեկը չէր մտնի իր սենյակը, այնպես որ ինքը բավական երկար ժամանակ ուներ հանգիստ մտորելու, թե ինչպես էր կարգավորելու իր այս նոր կյանքը:

Բարձր առաստաղով դատարկ սենյակը, ուր ինքը ստիպված էր տափակ պառկած ապրել հատակի վրա, վախ էր պատճառում նրան, իսկ ինքը չէր էլ հասկանում զգացած վախի պատճառը, որովհետև դա այն սենյակն էր, ուր ինքն արդեն հինգ տարի է, ապրում էր. և համարյա չգիտակցված մի վճիռով ու ոչ առանց թեթևակի ամոթի նա շտապեց տեղ գտնել բազմոցի տակ, ուր թեև նրա մեջքը թեթևակի սեղմված էր, իսկ ինքն էլ չէր կարողանում բավարար չափով բարձրացնել գլուխը, համարյա անմիջապես, տեղավորվելուն պես իրեն շատ հարմար զգաց և միայն այն բանի համար էր ափսոսում, որ մարմինը շատ ավելի լայն էր, որ կարողանար իր նոր թաքստոցում ամբողջովին տեղավորվել:

Նա այնտեղ մնաց ամբողջ գիշերը, որը մասամբ կիսաքուն վիճակում անցկացրեց, ու որովհետև սոված էր, շարունակ անհանգիստ էր՝ մասամբ տագնապահույզ մտքերից ու անորոշ հույսերից, և նրա բոլոր մտորումներն այն եզրահանգմանն էին բերում, որ ինքն առայժմ պարտավոր է հանգիստ պահել իրեն, համբերությամբ ու մեծագույն զգուշությամբ պարտավոր է այս տհաճությունները տանելի դարձնել ընտանիքի համար, որովհետև ինքն է իր այժմյան տեսքով դրանց պատճառ դարձել:

Արդեն այգաբացին, դեռ գրեթե մութ էր, Գրեգորն առիթ ունեցավ կայացրած սեփական որոշումների ուժը փորձել. քույրը, համարյա լրիվ հագնված, միջանցքի կողմից բացեց դուռը և լարված ներս նայեց: Նա Գրեգորին անմիջապես չնկատեց, բայց երբ տեսավ նրան բազմոցի տակ թաքնված,– մարդ Աստուծո, նա չէ՞ որ պետք է այստեղ մի տեղ լիներ, հո չէր կարող թռչել-անհետանալ,– քույրն այնպես վախեցավ, որ ի վիճակի չլինելով տիրապետել իրեն՝ դուռը դրսի կողմից կրկին վրա խփեց: Սակայն զգացվեց, որ նա կարծես թե զղջաց իր արարքի համար, անմիջապես նորից բացեց դուռը և, ասես թե ծանր հիվանդի կամ օտար մեկին էր այցելության եկել, ներս մտավ մատների ծայրերի վրա: Գրեգորը գլուխն առաջ էր բերել համարյա մինչև բազմոցի եզրը և հետևում էր նրան: Արդյոք նա հիմա կնկատի՞, որ ինքը կաթն այդպես էլ առանց ձեռք տալու էր թողել և իհարկե ոչ այն պատճառով, որ սոված չէր, և արդյոք դրանից հետո որևէ այլ կերակուր կբերե՞ր իրեն, ինչը, երևի, ավելի դուր գար իրեն: Եթե քույրը սեփական նախաձեռնությամբ չաներ դա, նա կգերադասեր սովից մեռնել, քան նրա ուշադրությունը դրա վրա հրավիրեր, թեև անզուսպ ցանկություն ունեցավ քրոջ ոտքերն ընկնել ու նրան խնդրել ուտելու որևէ այլ, լավ բան բերել: Բայց քույրը հենց առաջին հայացքից էր զարմանքով նկատել, որ թասը լիքն էր մնացել. դրա միջից ընդամենը մի փոքր քանակություն էր թափվել չորսբոլորը: Նա անմիջապես դուրս տարավ թասը, իսկ հանելուց ոչ թե դատարկ ձեռքերով էր բռնել այն, այլ փալասի կտորով:

Գրեգորն անչափ հետաքրքրված էր, թե քույրը փոխարենը հիմա ինչ էր բերելու. մտքով ամեն տեսակ կերակուր անցավ: Նա երբեք ի վիճակի չէր լինի գուշակել, թե Գրետան իր բարեհոգի բնավորությամբ ինչի էր ընդունակ:

Եղբոր նախասիրությունը ստուգած լինելու համար նա մի մեծ ընտրանի բերեց և այդ ամենը դասավորել էր հին լրագրի վրա: Այնտեղ կիսով չափ հոտած բանջարեղեն կար, ընթրիքից մնացած ոսկորներ էր շարել, դրանք էլ պատված էին սպիտակ, արդեն պնդացած սոուսով, մի քանի հատ չամիչ

էր դրել ու նուշ, պանրի մի կտոր էր բերել, ինչի մասին Գրեգորը մի քանի օր առաջ ասել էր, թե դա արդեն ուտել չի լինի, չորացած հացի կտոր, վրան կարագ քսած հաց կար ու մեկ էլ աղ արած հաց: Դրանցից բացի ներս էր բերել նաև արդեն ընդմիշտ Գրեգորի համար հատկացված թասը, ինչի մեջ հիմա ջուր էր լցրել: Ու որովհետև քույրն անչափ նրբանկատ էր ու գիտեր, որ Գրեգորը իր ներկայությամբ երբեք չէր սնվի, նա շտապեց հեռանալ, չմոռացավ անգամ բանալիով փակել դուռը, որ Գրեգորը կարողանար նկատել, որ հիմա կարող է թույլ տալ իրեն վայելել բերածը:

Երբ բանը ուտելուն հասավ, Գրեգորի տոտիկները շարժման մեջ ընկան: Ի դեպ, նրա վերքերը պետք է որ լիովին բուժված լինեին, նա այլևս ոչ մի դժվարություն չէր զգում, և դա զարմացրեց նրան ու հիշեցրեց, թե ինչպես էր մի ամիս առաջ դանակով թեթևակի կտրել մատը, ու թե ինչպես էր այդ վերքը դեռ երկու օր առաջ ցավ պատճառում: «Հիմա ինչ է, ես նվազ զգայո՞ւն եմ դարձել»,– մտածեց նա և ագահությամբ վրա ընկավ պանրին, ինչը մյուս բոլոր ուտելիքների մեջ առաջին հերթին ու անկասելի կերպով ձգեց նրան: Արագ-արագ, իրար հետևից ու գոհունակությունից արտասվակալած աչքերով նա խփշտեց պանիրը, բանջարեղենն ու սոուսը, մինչդեռ թարմ կերակուրները նրա քիմքին չէին գալիս: Նա մինչև անգամ անկարող էր դիմանալ դրանց հոտին, և այն բաները, որ ուզում էր ուտել, մյուսներից մի փոքր հեռու տարավ:

Նա վաղուց արդեն վերջացրել էր ուտելը և ծուլորեն պառկել էր նույն տեղում, երբ քույրը, որպեսզի հասկացներ, թե ինքը պետք է արդեն ետ քաշվի, դանդաղ պտտեցրեց բանալին: Այդ քայլը նրան իսկույն ստիպեց սթափվել, թեև համարյա արդեն ննջում էր, և նա կրկին շտապեց մտնել բազմոցի տակ: Այդ բանն անելը նրա համար անչափ մեծ ինքնահաղթահարում էր: Անգամ թեկուզ կարճ ժամանակով բազմոցի տակ մնալը դժվար էր, որովհետև առատ սնունդից մարմինը փոքր-ինչ կլորացել էր, իսկ այնտեղ նեղ էր, ու նա հազիվ էր կարողանում շնչել: Շնչահեղձ լինելու կարճատև նոպաների ուղեկցությամբ Գրեգորը փոքր-ինչ դուրս

պրծած աչքերով հետևում էր, թե ինչպես է ոչինչ չկասկածող քույրը, ավելը ձեռքն առած, ոչ միայն կերակուրի մնացորդները հավաքում, այլ նաև նրանք, որոնց Գրեգորը բոլորովին ձեռք չէր տվել. կարծես թե դրանք այլևս պիտանի չէին օգտագործման համար: Այդ ամենը նա արագ մի ամանի մեջ շուռ տվեց, փայտե կափարիչով ծածկեց ու այդպես էլ դուրս հանեց:

Հազիվ էր նա հեռացել սենյակից, Գրեգորը բազմոցի տակից դուրս պրծավ, սկսեց փքվել ու ձգել մարմինը:

Քրոջ հաստատած կարգով էլ Գրեգորն ամեն օր ստանում էր իր բաժին սնունդը. առաջին անգամ՝ առավոտյան, երբ ծնողներն ու աղախինը դեռ քնած էին, երկրորդ անգամ՝ տան անդամների ճաշի ժամից հետո, որովհետև ծնողները հետո քնում էին կարճ ժամանակով, իսկ քույրը աղախնին ինչ-որ բան գնելու պատրվակով տեղ էր ուղարկում: Իհարկե, նրանք էլ չէին ցանկանում, որ Գրեգորը սովից մահանար, բայց երևի նրանք չէին կարողանա դիմանալ նրա սնվելու մասին խոսել-իմանալուց բացի այլ կերպ տեղեկանալուն, իսկ քույրն էլ հավանաբար ցանկանում էր հեռու պահել նրանց այդ տխուր տեսարանից, որովհետև նրանք իրականում բավական տանջվել էին արդեն:

Թե ինչ պատրվակներով էին այն առաջին օրը բժշկին ու փականագործին կրկին հանել տանից՝ Գրեգորն այլևս չէր կարող իմանալ, որովհետև եթե նրան չէին հասկանում, ապա այլևս ոչ ոք չէր էլ մտածում, թե նա ի վիճակի կլիներ հասկանալ մյուսներին, այնպես որ, այն պահերին, երբ ստացվում էր, որ քույրն իր սենյակում էր լինում, Գրեգորին վիճակված էր միայն լսել քրոջ հառաչանքներն ու սրբերին հասցեագրված կոչերը: Միայն ավելի ուշ, երբ նա որոշ չափով վարժվել էր ամեն ինչին,– անմնացորդ ու վերջնական վարժվելու մասին, իհարկե, խոսք լինել չէր կարող,– Գրեգորը երբեմն որևէ արտահայտություն էր լսում, որ բարեհոգաբար էր ասվում կամ կարող էր այդպես մեկնաբանված լինել:

«Տես, է, այսօր դուրը եկել է»,– ասում էր քույրը, երբ Գրեգորը ինչպես հարկն է մաքրած էր լինում բերված կերը, մինչդեռ հակառակ դեպքում,



ինչը, սակայն, ավելի ու ավելի հաճախ էր պատահում, սովորություն ուներ անչափ տխուր ձայնով ասել. «Այսօր նորից ամեն ինչ թողել է իր տեղում»:

Ու թեև Գրեգորը անմիջապես որևէ զրուցակցից չէր կարող ոչ մի նորություն իմանալ, իսկ ինչ էլ որ իմանում էր, ընդամենը կողքի սենյակներին ականջ դնելու շնորհիվ էր, այնպես որ, հենց որևէ կողմից ձայներ էր լսում, անմիջապես վազում էր տվյալ դռան ուղղությամբ ու ամբողջ մարմնով կպչում էր դրան: Հատկապես առաջին օրերին չկար մի խոսակցություն, որ անգամ թեկուզ ոչ բացահայտ կերպով նրա մասին խոսք չլիներ: Ամբողջ երկու օր, ամեն անգամ սնվելու ժամանակ, կարելի էր քննարկումներ լսել, թե այս իրավիճակում ինչպես է հարկավոր պահել իրենց: Բայց նաև հաց ուտելու ժամերի միջև ընկած պահերին էին նրա մասին նույն թեմայով խոսում, որովհետև տանը միշտ այնպես էր ստացվում, որ ընտանիքի անդամներից երկուսը տանն էին լինում. ոչ ոք չէր կամենում մենակ մնալ, բայց նաև երբեք չէր կարելի այնպես անել, որ բոլոր անդամները բացակայեին:

Իրենց աղախինը հենց առաջին օրը ծնկների վրա իջած աղաչել էր մորը անհապաղ ազատել իրեն աշխատանքից, ընդ որում՝ հայտնի չէր, թե նա ինչ գիտեր ու ինչքանով էր տեղեկացված, և երբ նա իր խնդրանքը ներկայացնելուց հետո քառորդ ժամ անց հրաժեշտ էր տալիս, աչքերն արցունքով էին լցված. կարծես թե իր հանդեպ մեծագույն բարեգործություն էին ցուցաբերել, ու թեև նրանից ոչ ոք չէր պահանջել, նա սարսափելի մի երդում կերավ, որ բացարձակ ոչ մեկին ոչինչ չի պատմի:

Հիմա արդեն քույրը ստիպված էր նաև մոր հետ միասին կերակուր եփել, թեև դա մեծ չարչարանք չէր պատճառում, որովհետև համարյա բան չէին ուտում:

Գրեգորը շարունակ լսում էր, թե ինչպես էին տան անդամները մեկը մյուսին հորդորում մի բան ուտել, և իբրև պատասխան ուրիշ բան չէր լսվում, քան. «Շնորհակալ եմ, կուշտ եմ»: Կամ էլ նման որևէ այլ պատասխան էր հնչում:

Խմիչքի հարցում էլ պատկերը նույնն էր. հաճախ էր քույրը հարցնում հորը՝ արդյոք նա ցանկություն ունե՞ր գարեջուր խմել, և ի սրտե առաջարկում էր անձամբ գնալ ու բերել, իսկ երբ հայրը ձայն չէր հանում, քույրը նրա մտքերը փարատելու համար ասում էր, թե ինքը կարող է անգամ շենքի բարապանի կնոջը խնդրել, մինչև որ հայրը կարճ կտրում էր.

– Ոչ: Չեմ ուզում:– Եվ այլևս այդ մասին խոսք չէր լինում:

Հենց առաջին օրվա ընթացքում հայրը ինչպես մորը, այնպես էլ քրոջը ներկայացրեց իրենց ամբողջ կարողության իսկական վիճակն ու հեռանկարները: Մեկ-մեկ նա վեր էր կենում սեղանի մոտից ու տան մեջ թաքցված արժեքավոր իրերի տուփից, որ նրան հաջողվել էր փրկել հինգ տարի առաջ սնանկացած սեփական ֆիրմայից, որևէ անդորրագիր էր ցույց տալիս կամ գրառումների գրքույկ: Լսվում էր, թե ինչպես է նա բարդ կողպեքը բացում, ու երբ վերցնում էր իրեն հետաքրքրող թուղթը, կրկին փակում էր այն: Հոր ներկայացրած բացատրությունները մասամբ առաջին գոհացուցիչ բաներն էին, որ Գրեգորն իմացավ իր հետ կատարված արտասովոր դեպքի օրվանից: Նա այն կարծիքին էր եղել, թե հոր վարած գործարքներից բացարձակ ոչինչ չէր մնացել, ու որովհետև հայրը իրեն բան չէր պատմել, ինքն էլ որոշել էր չհետաքրքրվել: Գրեգորի հոգսն այն օրերին միայն մի բան էր եղել. ուժերը ներածին չափ ամեն ինչ անել, որ ընտանիքը հնարավորինս շուտ մոռանա վարած գործերի փլուզման հետ կապված տհաճությունները,

ինչը բոլորին կատարյալ հուսահատության էր հասցրել: Այդպիսով նա այն օրերին սկսել էր առանձնահատուկ եռանդով աշխատել ու համարյա մի գիշերվա ընթացքում աննշան աշխատակցից դարձել էր շրջիկ գործակատար, որ, բնականաբար, դրամ վաստակելու միանգամայն այլ հնարավորություններ ուներ, և ում աշխատանքային հաջողությունները բերած եկամուտներից իսկույն կանխիկ գումարի էին վերածվում, ինչն արդեն տանը կարող էր դրվել շշմած ու երջանկացած ընտանիքի սեղանին: Իսկապես հրաշալի օրեր էին, ու այն ժամանակվանից սկսած դրանք, առնվազն այդպիսի փայլով, այլևս երբեք չէին կրկնվել, թեև Գրեգորը հետագայում նույնպես այնքան փող էր վաստակում, որ ի վիճակի էր ամբողջ ընտանիքի ծախսերը հոգալ և հոգում էր: Նրանք արդեն սովորել էին դրան. ինչպես Գրեգորը, այնպես էլ ընտանիքը: Տանը շնորհը ընդունողի տեսքով վերցնում էին կանխիկ փողը, իսկ ինքը մեծ ուրախությամբ տալիս էր ամեն ինչ, սակայն դրան բնորոշ առանձնահատուկ ջերմությունը չէր զգացվում այլևս: Միայն քույրն էր Գրեգորին հարազատ մնացել, ու նրա հետ կապված Գրեգորը գաղտնի մտադրություն ուներ. առանց հաշվի առնելու ահռելի ծախսերը, որ ուսումն էր պատճառելու (դրանք նա ի վիճակի էր այլ կերպ հայթայթել), ուղարկել նրան կոնսերվատորիայում սովորելու, որովհետև քույրը, ի տարբերություն իրեն, երաժշտություն շատ էր սիրում ու կարողանում էր այնպես ջութակ նվագել, որ հուզում էր բոլորին: Հաճախ, երբ Գրեգորը կարճ ժամանակով քաղաքում էր լինում, քրոջ հետ ունեցած զրույցներում հիշատակում էր կոնսերվատորիան, բայց դա մշտապես հնչում էր սոսկ որպես գեղեցիկ երազանք, ինչի իրականացման մասին հնարավոր չէր մտածել անգամ, և ծնողներին նույնիսկ տհաճություն էր պատճառում այդ թեմայով խոսակցություններ լսելը: Մինչդեռ Գրեգորը ամենայն լրջությամբ էր մտածում իր ծրագրի մասին և արդեն մտադիր էր Ծննդյան տոների երեկոյան հանդիսավոր կերպով հայտարարել դա: Իր ներկայիս վիճակին չհամապատասխանող, նման ավելորդ մտքեր էին անցնում նրա գլխով, երբ նա սենյակի մուտքի մոտ զգաստ կպչում էր դռանն ու ականջ էր դնում: Հաճախ էր

պատահում, որ ընդհանուր թուլության պատճառով այլևս ի վիճակի չէր լինում ականջ դնել, ու նման պահերին նա գլուխն անփութորեն խփում էր դռանը, սակայն արդեն հաջորդ իսկ պահին նորից ամուր էր պահում, որովհետև անգամ չնչին աղմուկը, որ այդ պատճառով առաջանում էր, լսվում էր հարևան սենյակում ու առիթ դառնում, որ այնտեղ բոլորը լռեին:

– Հիմա ի՞նչ է անում,– ակնհայտորեն դեպի դուռը շրջված՝ մի քանի վայրկյան լռելուց հետո դժգոհում էր հայրը, որոշ ժամանակ չէին խոսում, ապա շարունակում էին ընդհատված զրույցը: Այժմ Գրեգորն արդեն բավական շատ բան գիտեր իրերի իսկական վիճակի մասին, որովհետև հայրը սովորություն ուներ իր բացատրությունները հաճախակի կրկնել. մասամբ որովհետև ինքը ևս արդեն բավական ժամանակ նման բաներով չէր զբաղվել, մասամբ նաև, որ մայրը չէր կարողանում հենց առաջին բացատրությունից հետո հասկանալ նրա ասածի իմաստը, ու հիմա Գրեգորը գիտեր, որ, անկախ ամեն տեսակ անհաջողություններից, անցած օրերից մնացած մի աննշան կարողություն այնուամենայնիվ դեռ կար, որ մինչև հիմա ձեռք չտված տոկոսների շնորհիվ արդեն բավական մեծացել էր: Դրանից բացի փող էլ կար, որ Գրեգորն էր ամեն ամիս տուն բերում. ինքն իր ծախսերի համար ընդամենը մի քանի գուլդեն էր պահում մոտը, այդ փողն ամբողջովին չէին ծախսել, ու հիմա թեև փոքր, բայց որոշակի գումար գոյացել էր: Իր սենյակի դռների հետևում Գրեգորը եռանդով գլխով էր անում՝ ուրախանալով այդ անսպասելի զգուշության ու խնայողության համար: Իրականում նա ի վիճակի կլիներ այդ ավելցուկ փողերով փակել հոր՝ իր շեֆի հանդեպ ունեցած պարտքերը, և դրանից հետո մոտ կլիներ այն օրը, երբ ինքը կկարողանար ազատվել ստանձնած աշխատանքից, մինչդեռ այս պահին, անկասկած, շատ ավելի լավ կլիներ վարվել այնպես, ինչպես հիմա հայրն էր ներկայացնում: Ափսոս, որ այդ փողը չէր բավականացնի, որ ընտանիքը կարողանար միայն տոկոսների հաշվին ապրել: Դա կբավականացներ միայն, որ իրենք մի, ամենաշատը երկու տարի ապրել կարողանային: Ոչ ավելին: Այսինքն՝ դա սոսկ գումար էր, որին իրականում

չէր կարելի ձեռք տալ, և որը պետք է պահվեր բացառապես ծայրահեղ անհրաժեշտության համար:

Ապրելու համար անհրաժեշտ փողը վաստակել էր հարկավոր, մինչդեռ հայրը, որ թեև առողջ էր, բայց արդեն տարիքն առած մարդ էր, հինգ տարի է՝ ոչ մի գործ չէր արել ու, բացի դրանից, շատ բան էլ չէր կարողանա անել: Այս հինգ տարիների ընթացքում, որ նրա չարչարանքներով լի, սակայն հաջողության չհասած կյանքի միակ հանգստի հատվածն էր, նա բավական գիրացել էր ու դրա հետևանքով անչափ ծանրաշարժ էր դարձել: Հիմա ի՞նչ. մայրն է՞լ էր փող վաստակելու. ախր նա տառապում էր ասթմայով, և բնակարանով պտույտն արդեն հոգնեցնում էր, ու ամեն երկրորդ օրը նա շնչարգելությունից տառապելով պառկում էր բաց պատուհանների դիմաց դրված բազմոցին: Քույրն է՞լ էր փող վաստակելու, որ թեև տասնյոթ տարեկան, բայց դեռ երեխա էր, ում մինչայժմյան կյանքը միայն այն էր տվել, որ նա կարողանում էր լավ հագնվել, քնում էր երկար, տան գործերում էր օգնում, մի քանի համեստ հաճույքների էր մասնակցում ու ամենից առաջ ջութակ էր նվագում: Ու հենց որ խոսքը փող վաստակելու անհրաժեշտության մասին էր լինում, Գրեգորը թողնում էր դուռը, իրեն գցում էր դռան կողքին դրված կաշեպատ ու զով բազմոցին, որովհետև նրան թվում էր, թե այրվում է վշտից ու ամոթից: Հաճախ էր նա երկար գիշերներն այնտեղ այդպես պառկած անցկացնում, ոչ մի վայրկյան չէր քնում ու ժամերով աչքերը չէր կտրում կաշվից: Կամ չէր վախենում չարչարանք պատճառող դժվարությունից, բազկաթոռներից մեկը քարշ էր տալիս պատուհանի կողմը, կառչելով բարձրանում էր մինչև պատուհանագոգը և, բազմոցն իրեն հենարան դարձրած, հենվում էր պատուհանին՝ ակնհայտորեն վերհիշելով ազատության պահերը, որ անցած օրերին իր համար այն էր եղել, որ այդպես կանգներ ու դուրս նայեր, որովհետև, իսկապես, հիմա նա օրըստօրե ավելի վատ էր տեսնում, նույնիսկ փոքր հեռավորության վրա դրված իրերն էին աղոտ երևում: Դիմացի հիվանդանոցը, որի ամենօրյա պարտադրված տեսքը նա առաջ անիծում էր ամեն վայրկյան, այժմ արդեն բոլորովին

չէր տեսնում, ու եթե չիմանար, որ ինքն աղմուկից հեռու, բայց միանգամայն քաղաքի կյանքով շնչող Շարլոտտենշտրասսեում է ապրում, կարող էր մտածել, թե իր պատուհանից այնպիսի ամայության է հայացքը հառել, ուր գորշ երկինքն ու գորշ երկիրն այլևս առանց միմյանցից զանազանվելու միախառնվել են:

Ամեն ինչի հանդեպ ուշադիր քրոջն ընդամենը երկու անգամ անհրաժեշտ եղավ նկատել, որ բազկաթոռը պատուհանի մոտ է դրված, որ դրանից հետո ամեն անգամ, երբ սենյակը հավաքում էր, բազկաթոռը հրեր պատուհանի մոտ՝ ճիշտ նույն տեղը, ու դեռ մի բան էլ պատուհանի ներսի փեղկը բաց էր թողնում:

Եթե Գրեգորը կարողանար խոսել քրոջ հետ ու իր համար նրա արած ամեն ինչի համար շնորհակալություն հայտներ, կկարողանար նրա ծառայությունն ավելի հեշտ տանել, մինչդեռ այսպես նեղվում էր: Քույրը, անշուշտ, ջանք էր թափում ամբողջ իրավիճակի տհաճությունը հնարավորին չափ շտկել, ու ինչքան երկար ժամանակ էր անցնում, նրան, բնականաբար, ավելի լավ էր հաջողվում դա իրականացնել, բայց Գրեգորը ևս այդ ընթացքում շատ բան էր ավելի հստակ ընկալում:

Արդեն քրոջ ներս մտնելը վախեցնում էր նրան:

Մինչ նա սկզբի օրերին շատ էր հոգ տանում, որ մյուսներին խնայեր Գրեգորի սենյակի տեսարանից, հիմա արդեն, հազիվ ներս մտած, առանց դուռը փակելու վրա ժամանակ կորցնելու, անմիջապես նետվում էր պատուհանի կողմն ու փութացող ձեռքերով թափով բացում էր այն, կարծես խեղդվում էր, ու եթե նույնիսկ դուրսը ցուրտ էլ լիներ, որոշ ժամանակ մնում էր այնտեղ կանգնած ու խոր շունչ էր քաշում: Նման վազվզոցով նա Գրեգորին օրը երկու անգամ սարսափի էր մատնում: Մինչ քույրը սենյակում էր, նա, բազմոցի տակ կծկված, դողում էր, դողում էր, բայց և շատ լավ հասկանում, որ քույրը հաստատ կխնայեր իրեն, այդպես չէր վարվի, եթե միայն ի վիճակի լիներ եղբոր սենյակում մնալ առանց պատուհանները բացելու:



Մի անգամ,– Գրեգորի կերպարանափոխությունից հաստատ մի ամիս անցել էր արդեն, ու կարելի էր ենթադրել, որ քրոջ համար այլևս ոչ մի առանձնահատուկ պատճառ չպետք է լիներ եղբոր արտաքինը տեսնելուն պարտադրված լինելու դեպքում կարկամել զարմանքից,– քույրը սովորականից շուտ եկավ ու տեսավ, թե ինչպես է Գրեգորը անշարժ ու իր նման կեցվածքով կարծես իրոք վախեցնելու մտադրությամբ պատուհանից դուրս նայում: Գրեգորի համար անսպասելի չէր լինի, եթե նա ներս չմտներ, որովհետև ինքը պատուհանի մոտ իր դիրքով խանգարում էր սենյակ մտնելուն պես անմիջապես բացել պատուհանը, բայց այդ օրը քույրը ոչ միայն ներս չմտավ, այլև մինչև իսկ արագ ետ քաշվեց ու վրա խփեց դուռը: Եթե օտար մեկը լիներ, հաստատ կարող էր մտածել, թե Գրեգորը դարան է մտել և ուզում է կծել իրեն: Գրեգորն, իհարկե, առանց ժամանակ կորցնելու թաքնվեց իր բազմոցի տակ, բայց հիմա արդեն նրան հարկ եղավ մինչև ճաշ սպասել, մինչև որ քույրը նորից եկավ: Եկավ, բայց հիմա արդեն շատ ավելի անհանգիստ էր երևում, քան էր սովորաբար: Գրեգորը դրանից եզրակացրեց, որ իր արտաքին տեսքը

անտանելի էր քրոջ համար, որ ինքը հետագայում էլ էր զզվելի մնալու, և որ քույրը հաղթահարելու շատ բան ուներ, որ զսպեր իրեն ու կարողանար մինչև անգամ բազմոցի տակից դուրս ցցված նրա մարմնի մի մասի տեսքից սարսափած դուրս չփախչել: Քրոջն այդ տեսարանից անգամ խնայած լինելու մտադրությամբ նա մի օր նույնիսկ մեջքի վրա կտավե մի լայն կտոր հարմարեցնելով (դա իրականացնելու համար նա չորս ժամ կորցրեց)՝ տեղափոխեց այն բազմոցի վրա և այնպես ծածկեց, որ հիմա քույրը, եթե նույնիսկ կռանար էլ, իրեն բոլորովին չէր տեսնի: Ու եթե քույրը մտածեր, թե այդ կտորի անհրաժեշտությունը չկար, նա հաստատ կվերցներ ու կհեռացներ այն, որովհետև Գրեգորին բնավ հաճելի չէր ամբողջովին մեկուսանալ շուրջը եղած ամեն ինչից, և դա միանգամայն հասկանալի էր: Մինչդեռ քույրը թողեց կտորն այնպես, ինչպես որ փռված էր, և Գրեգորին թվաց նույնիսկ, թե քրոջ դեմքին երախտագիտության արտահայտություն նկատեց, երբ գլխի աննկատ շարժումով փոքր-ինչ ետ տարավ կտորը, որ տեսներ, թե ինչպես էր գնահատում քույրն այդ փոփոխությունը:

Առաջին երկու շաբաթը ծնողները չէին կարող ստիպել իրենց մտնել նրա սենյակը, և Գրեգորը հաճախ էր լսում, թե ինչպես էին նրանք լիովին գնահատում քրոջ կատարած այժմյան աշխատանքը, այն դեպքում, երբ մինչև հիմա հաճախ էին քրոջ վրա զայրանում՝ նրան ոչ մի բանի համար պիտանի աղջիկ չհամարելով: Հիմա արդեն հաճախ էին երկուսով՝ հայրն էլ, մայրն էլ, Գրեգորի սենյակի մոտ սպասում, մինչ աղջիկը հավաքում էր սենյակը, ու հենց ոտքը սենյակից դուրս էր դնում, նրա առաջնահերթ պարտականությունն էր ամենայն մանրամասնությամբ պատմել, թե սենյակում ինչը որտեղ էր դրված, Գրեգորն ինչ էր կերել, ինչպես էր պահել իրեն այս անգամ և արդյոք դեպի լավը գնալու թեկուզ նվազագույն փոփոխություն նկատվում էր նրա մոտ: Ի դեպ, հարկ է ասել, որ մայրը, հոր համեմատ, շատ ավելի շուտ էր ցանկանում տեսնել Գրեգորին, բայց հայրը հակառակվում էր մոր ցանկությանը, քույրը միանում էր նրան, ու երկուսով խելամիտ հիմնավորումներ ներկայացնելով՝ սկզբի օրերին ետ էին պահում նրան: Գրեգորն

անչափ ուշադիր լսում էր նրանց խոսքերն ու միանգամայն համամիտ էր նրանց հետ: Ավելի ուշ, սակայն, հարկ եղավ ուժ գործադրել նրան ետ պահելու համար, և երբ նա բղավեց՝ «Թողեք ինձ, թողեք ինձ մտնեմ Գրեգորի մոտ, ախր նա իմ որդին է, իմ անբախտ որդին: Լավ, մի՞թե չեք հասկանում, որ ես պարտավոր եմ նրա մոտ մտնել», այդ խոսքերից ազդված Գրեգորը մտածեց, թե գուցե լավ կլիներ, եթե մայրը ներս գար: Ոչ ամեն օր, իհարկե, բայց գոնե շաբաթը մի անգամ, որովհետև նա ամեն ինչ շատ ավելի լավ կհասկանար, քան քույրը, որ թեև քաջ էր, չէր վախենում, բայց ախր երեխա էր, ու հաստատ հենց անմիտ երեխա լինելու փաստն էր պատճառը, որ ստանձնել էր եղբոր խնամքի նման ծանր աշխատանքը:

Գրեգորի՝ մորը տեսնելու ցանկությունը շուտով իրականություն դարձավ:

Օրվա ընթացքում Գրեգորը, ծնողների հանդեպ ակնածանքից, չէր ցանկանում հայտնվել պատուհանի մոտ: Սենյակի հատակի մի քանի քառակուսի մետր տարածքի վրա նույնպես շատ չէր կարողանում շարժվել, քարի նման ընկած մնալուն արդեն հենց գիշերվանից չէր դիմանում, կերակուրը այս օրերի ընթացքում արդեն դադարել էր հաճույք պատճառել, այնպես որ մի բանով զբաղված լինելու համար նա իր համար սովորություն դարձրեց պատերի ու առաստաղի վրայով ետուառաջ սողալը: Նրան հատկապես հաճույք էր պատճառում առաստաղից կախ ընկնելը. դա լրիվ այլ բան էր, քան հատակի վրա պառկած մնալը. ավելի ազատ էր շնչում, մարմնի միջով թեթև տատանում էր անցնում, և իրեն երջանկության զգացում բերող այդ մտացիր վիճակում, ինչպես որ Գրեգորն էր զգում իրեն վերևում, լավ էլ կարող էր պատահել, որ հենց իր համար էլ անսպասելիորեն հանկարծ պոկվեր ու շրմփար հատակին: Սակայն հիմա արդեն նա միանգամայն այլ կերպ էր սեփական հսկողության տակ պահում իր մարմինը, քան նախկինում էր, ու եթե նույնիսկ հանկարծ ընկներ էլ, իրեն վնաս չէր պատճառի: Քույրը, օրինակ, անմիջապես էր նկատել այդ նոր զբաղմունքը, որ Գրեգորն էր իր համար հնարել: Երբ նա պատերի ու առաստաղի վրայով այսուայնկողմ էր

սողում, տոտիկների բարձիկներից կպչուն նյութի հետքեր էին մնում ամեն տեղ, այնպես որ, դրանց տեսքից դրդված՝ քույրը գլուխն էր մտցրել առավելագույնս հեշտացնել Գրեգորի՝ սողալով շարժվելու աշխատանքը և նրա սենյակից հեռացնել խանգարող կահույքը, առաջին հերթին պահարանն ու գրասեղանը: Բայց նա ի վիճակի չէր առանց որևէ մեկի օգնության իրականացնել այդ միտքը: Հորը նա չէր համարձակվում այդ մասին խնդրել, աղախինը, հենց սկզբից էր պարզ, ոչ մի դեպքում չէր օգնի իրեն, որովհետև այս մոտ տասնվեցամյա աղջնակը նախկին խոհարարուհու՝ գործից ազատվելուց հետո թեև արիաբար էր դիմանում, սակայն ընդամենը մի բացառություն էր խնդրել, որ իրեն թույլ տային խոհանոցի դուռը շարունակ փակ պահել ու բացել միայն, երբ հատուկ անհրաժեշտություն լիներ: Այնպես որ, քրոջը այլ բան չէր մնում, քան մի անգամ մոր հետ այնտեղ մտնել: Ուրախության ոգևորված բացականչությամբ էլ մայրը հավանություն տվեց Գրետայի մտքին, բայց Գրեգորի դռան դիմաց լռվեցմնաց: Քույրն առաջին հերթին, իհարկե, նախ զննեց՝ արդյոք սենյակում ամեն ինչ կարգի՞ն է, և հետո միայն թույլ տվեց, որ մայրը ներս մտնի: Գրեգորը աճապարանքով, կտավե կտորն ավելի էր ցած քաշել ու ծալքեր էր գոյացրել, այնպես որ այդ ամենը իսկապես այն տպավորությունն էր թողնում, թե կտորը պատահաբար է բազմոցին գցված: Գրեգորն այս անգամ էլ բաց թողեց կտորի տակից հետևելու պատեհությունը, հրաժարվեց այս անգամ մորը տեսնելու մտքից և սոսկ գոհ էր, որ նա պարզապես եկել էր:

– Արի, արի: Նա չի երևում,– ասաց քույրը: Հիմա նա հաստատ բռնել էր մոր

ձեռքն ու առաջնորդում էր նրան: Գրեգորը լսեց, թե ինչպես են երկու թույլ կանայք ծանրածանր ու հին պահարանը փորձում շարժել տեղից, ու թե ինչպես էր քույրը, առանց մոր զգուշացումները հաշվի առնելու, շարունակ փորձում իր վրա վերցնել գործի մեծ մասը. մայրը մտահոգվում էր, որ աղջիկը հանկարծ կարող է գերլարվածության հասցնել իրեն:

Գործը շատ երկար տևեց. համարյա կես ժամ չարչարվելուց հետո մայրն առաջարկեց, որ ավելի լավ կլինի պահարանը այստեղ թողնել, որովհետև այն նախևառաջ անչափ ծանր էր, իսկ մինչև հոր վերադառնալը տուն իրենք չեն հասցնի վերջացնել գործը, բայց այն այդպես սենյակի մեջտեղում եթե թողնեին, կխանգարեին Գրեգորի ազատ շարժվելուն, և բացի դրանից բոլորովին էլ միանշանակ չէր, որ պահարանը սենյակից հեռացնելով Գրեգորին լավություն կանեին: Իրեն թվում էր, որ ավելի ճիշտ կլիներ այլ կերպ վարվել. դատարկ պատերի տեսքից իր սիրտն է ճմլվում, իսկ ով է ասում, թե Գրեգորը ևս նույն բանը չի զգում. ախր նա վաղուց արդեն վարժվել է իր սենյակի կահույքին, ու եթե սենյակը դատարկեն, իրեն լքված կզգա:

– Մի՞թե ես իրավացի չեմ,– կամաց, անչափ կամաց ասաց մայրը, ինչպես խոսում էր սովորաբար, համարյա շշնջալով, ասես ուզում էր խուսափել, որ Գրեգորը, ում այս պահին թաքնված լինելու ճշգրիտ տեղը չգիտեր, մինչև անգամ իր ձայնը լսեր, որովհետև համոզված էր, որ տղան իր խոսքերը չէր հասկանում:– Ու հիմա մի՞թե այնպես չի ստացվում, որ մենք կահույքը հեռացնելով ցույց կտանք, թե նրա վիճակի բարելավման հետ կապված ամեն տեսակ հույսից ձեռք ենք քաշել ու հիմա նրան անտեր-անտիրական թողել ենք իր հույսին մնա: Կարծում եմ, որ լավագույն ելքը կլինի, եթե փորձենք սենյակը հենց այն նույն վիճակում պահել, ինչպես որ նախկինում է եղել, որպեսզի Գրեգորը, երբ որ կրկին մեզ մոտ վերադառնա, ամեն ինչ իր նախկին տեսքով գտնի և այդպիսով ավելի հեշտ կարողանա մոռանալ ընթացքում կատարվածը:

Երբ Գրեգորը լսում էր մոր այս խոսքերը, հասկացավ, որ մարդկային անմիջական շփման պակասությունը, որ ընտանիքի ներսում միապաղաղ կյանքով էր պայմանավորված, այս երկու ամսվա ընթացքում պետք է որ հաստատ խռոված լիներ իր բանականությունը, որովհետև այլ կերպ նա չէր կարողանա ինքն իրեն բացատրել, թե ինքն ամենայն լրջությամբ կարող էր ի վիճակի լինել պահանջել, որ իր սենյակը դատարկեին: Մի՞թե ինքը իսկապես ցանկություն ուներ տաք, ժառանգություն ստացած կահույքով հարմարավետ կահավորված սենյակը թույլ տալ այնպիսի մի քարանձավի վերածել, որի մեջ ինքը հաստատ կկարողանար առանց խոչընդոտի բախվելու բոլոր ուղղություններով սողալ, և այդ պայմաններում էլ արագ, լիովին մոռանալ իր՝ մարդկային անցյալը: Ախր նա հենց այս պահին շատ մոտ էր մոռանալուն, և միայն մոր ձայնը, որ բավական ժամանակ չէր լսել, սթափեցրեց նրան: Ոչինչ էլ չպետք է հեռացվեր այստեղից: Ամեն ինչ պետք է մնար իր տեղում, կահույքի՝ իր վրա թողած դրական ազդեցությունը նա չէր կարող այլ բանով լրացնել, ու եթե կահավորանքը խանգարում էր իրեն, որ անիմաստ այսուայնկողմ սողալով զբաղվեր, ապա դա վնաս չէր, այլ մեծ առավելություն:

Մինչդեռ քույրը բոլորովին այլ կարծիքի էր: Նա, հարկ է ասել՝ անշուշ ոչ լիովին անհիմն, սովորել էր Գրեգորին առնչվող հարցերի քննարկման ժամանակ ծնողների մոտ հանդես գալ իբրև անչափ քաջատեղյակ անձ, այնպես որ այս պահին մոր արտահայտած կարծիքը քրոջ համար բավարար հիմք էր, որ հիմա արդեն պնդեր, թե հարկավոր է ոչ թե միայն պահարանն ու գրասեղանը հեռացնել, ինչի մասին որ սկզբում էր մտածել, այլև անհրաժեշտ է հեռացնել ամբողջ կահույքը՝ բացառությամբ, իհարկե, բազմոցի, որ անփոխարինելի էր:

Նրա կողմից դա, իհարկե, միայն մանկավայել համառություն չէր ու ոչ էլ վերջերս այդքան անսպասելի ու դժվար ապրումներով ձեռք բերված ինքնավստահություն, ինչպես որ նա էր իր կարծիքը պնդում: Նա իրոք նկատել էր, որ Գրեգորին սողալու համար մեծ տարածք էր հարկավոր, մինչդեռ

կահույքը, ինչպես կարելի էր տեսնել, ոչ մի կիրառություն չուներ այստեղ: Հնարավոր է, որ նման որոշում կայացնելու հարցում հասակակից աղջիկներին բնորոշ խանդավառ խառնվածքը ևս իր դերն ուներ. որը ամեն մի առիթով ձգտում էր բավարարում գտնել, և այդ էր պատճառը, որ տվյալ պահին Գրետային հենց նման որոշում կայացնելու էր գայթակղում, որպեսզի Գրեգորի ներկայիս վիճակը ավելի սարսափազդու դարձներ, որպեսզի հետագայում նրա համար ավելի շատ բան անել կարողանար, քան մինչև հիմա էր անում: Պարզ էր, որ այնպիսի մի սենյակ, ուր միայն Գրեգորն էր մեն մենակ իշխում, հազիվ թե Գրետայից բացի գտնվեր ևս մեկը, որը կհամարձակվեր երբևէ մտնել:

Այնպես որ, նա թույլ չտվեց, որ մայրը իրեն ետ կանգնեցներ իր կայացրած որոշումից: Մայրը, որն առանց այդ էլ սենյակում իրեն համակած անհանգստության պատճառով իրեն անվստահ էր զգում, շուտով լռեց ու իր ուժերը ներածին չափով փորձում էր օգնել դստերը դուրս հանել պահարանը:

Բայց Գրեգորը անհրաժեշտության դեպքում, ասենք, կարող էր առանց պահարանի յոլա գնալ, մինչդեռ գրասեղանը պետք է մնար: Ու հազիվ էին կանայք ծանր հևալով ու տնքտնքալով պահարանը տեղաշարժելով լքել սենյակը, երբ Գրեգորը բազմոցի տակից գլուխը դուրս հանեց, որ տեսնի, թե ինչպես է կարող զգուշորեն ու ծայր նրբանկատությամբ միջամտել:

Ցավոք, մինչ Գրետան կողքի սենյակում մենակ գրկել էր պահարանն ու առանց այն տեղից շարժել կարողանալու այսուայնկողմ էր ճոճվում, առաջինը մայրը վերադարձավ սենյակ: Մայրը սովոր չէր Գրեգորի տեսքին, Գրեգորը կարող էր մորը ցավի տեր դարձնել, այնպես որ նա շտապեց վախեցած ետ-ետ վազել դեպի բազմոցի մյուս ծայրը, բայց չկարողացավ խանգարել, որ վարագույրի պես կախ ընկած կտորը իր ազատ հատվածում ալիք տալով չճոճվեր:

Դա էլ բավական եղավ մոր ուշադրությունը գրավելու համար: Նա կարկամեց, մի պահ վարանոտ մնաց կանգնած ու վերադարձավ Գրետայի մոտ:

Թեև Գրեգորը շարունակ մրմնջում էր, թե արտասովոր ոչինչ տեղի չի ունենում, որ ընդամենը մի քանի կտոր կահույք է տեղից տեղ փոխադրվում, իրականում, սակայն, կանանց ներսուդուրս անելը, նրանց կարճաշունչ կանչերը, կահույքի քստքստոցը հատակին նրա վրա ազդում էր ինչպես մեծ, բոլոր կողմերից իր վրա լցվող իրարանցում, և նա որքան էլ տոտիկներով ու գլխով ամուր կծկվեր, մարմնով պինդ կպչեր հատակին, անառարկելիորեն պետք է խոստովաներ, որ այս ամենը չէր կարողանա երկար հանդուրժել. սրանք մտել են իր սենյակը, դատարկում են այն ամենը, ինչ արժեք էր ներկայացնում իր համար. պահարանը, ուր նրա նրբասղոցն էր ու մյուս գործիքները, արդեն դուրս էին տարել, հիմա փորձում էին տեղից շարժել ոտքերով համարյա թե հատակի մեջ խրված գրասեղանը, որի վրա ինքն աշխատել էր թե՛ որպես առևտրական գործակալ, թե՛ որպես գիմնազիայի աշակերտ, ախր տարրական դպրոցում սովորելու տարիներին էլ էր նա իր դասարանական հանձնարարություններն այդ գրասեղանի վրա կատարել, այնպես որ հիմա այլևս ժամանակ չուներ, որ ստուգեր, թե իրեն հարազատ այս երկու կանայք ինչ լավ ու բարի մտադրություններ ունեն: Նրանց գոյությունը նա համարյա մոռացել էր, որովհետև, հոգնածության զգալով, հիմա նրանք բացարձակ անձայն էին աշխատում, ու միայն նրանց ոտքերի ծանր թմփթմփոցն էր լսվում:

Եվ Գրեգորը վճռականորեն դուրս նետվեց:

Այդ պահին կանայք կողքի սենյակում դեռ փորձում էին հրել գրասեղանը, որ մի փոքր էլ առաջ տանեին: Գրեգորը չորս անգամ փոխեց վազքի ուղղությունը, նա իսկապես չգիտեր, թե ամենաառաջին հերթին ինչն էր հարկավոր փրկել, և հանկարծ նա նկատեց արդեն դատարկված պատին անսովոր կերպով աչքի զարնող, ամբողջովին մորթե զգեստներով կնոջ նկարը: Նա պատով արագ սողաց վերև ու սեղմվեց նկարի ապակուն, որն ամուր պահեց իրեն ու հաճելիորեն դուր եկավ նրա տաք փորին: Գոնե այս նկարը, որը Գրեգորը հիմա ամբողջ մարմնով ծածկել էր, այլևս ոչ ոք չի կարողանա վերցնել: Նա գլուխը շրջեց հյուրասենյակի

դռան կողմը, որպեսզի կարողանար հետևել, թե ինչպես էին սենյակ վերադառնալու կանայք:

Նրանք իրենց թույլ չէին տվել շատ հանգստանալ և շուտով վերադարձան:

Գրետան թևի տակ էր առել մորը, գրկել էր նրան ու համարյա թե այդպես էլ բերում էր:

– Դե, հիմա՞ ինչ ենք վերցնելու,– հարցրեց Գրետան ու շուրջը նայեց: Այդ պահին նրա հայացքը խաչվեց պատին փակչած Գրեգորի հայացքի հետ: Անշուշտ, միայն մոր ներկայությունն էր պատճառը, որ նա պահպանեց ինքնատիրապետումը. դեմքը խոնարհեց մոր կողմը, որ ետ պահեր նրան շուրջը նայելուց, և դողացնելով ու առանց մտածելու ասաց.

– Արի, արի ինձ հետ: Ավելի լավ կլինի մի որոշ ժամանակով հյուրասենյակ վերադառնանք:

Գրետայի մտադրությունը պարզ էր Գրեգորին. նա ցանկանում էր մորն ապահով տեղ տանել ու միայն դրանից հետո իրեն պատի վրայից քշել: Ինչ արած, նա միշտ էլ կարող էր փորձել անել դա: Գրեգորը տեղ էր զբաղեցրել իր նկարի վրա և մտադիր չէր զիջել այն: Ավելի լավ է Գրետայի դեմքին նետվեր:



Մինչդեռ Գրետայի խոսքերը բավական անհանգստություն պատճառեցին մորը. նա մի քայլ ետ գնաց, նկատեց պատի ծաղկավոր պաստառի վրայի հսկայական գորշ հետքը, ու մինչ նրա գիտակցությանը կհասներ, որ պատին տեսածը Գրեգորն է, խռպոտաձայն ճիչով աղաղակեց.

– Ախ Աստված իմ, ախ Աստված իմ,– ու ձեռքերը լայն տարածած, կարծես հրաժարվում էր իր տեսած և ունեցած ամեն ինչից, փուլ եկավ բազմոցին ու այլևս չշարժվեց:

– Լսի՛ր, Գրեգո՛ր,– բռունցքը վեր պահած՝ ու համառ հայացքով նրան նայելով բղավեց քույրը: Եղբոր կերպարանափոխությունից հետո առաջին բառերն էին դրանք, որ նա անմիջապես նրան էր ուղղել: Նա վազեց կողքի սենյակը ինչ-որ հեղուկ բերելու, որ կկարողանար մորն ուշքի բերել: Գրեգորը ևս ցանկանում էր օգնել. նկարը փրկելու համար նա դեռ բավական ժամանակ ուներ: Բայց նա անչափ ամուր էր կպել ապակուն և պետք է ուժ գործադրեր, որ կարողանար պոկ գալ: Ապա նա ևս վազեց կողքի սենյակը, կարծես կարող էր քրոջը որևէ խորհրդով օգնել, ինչպես որ նախկինում էր եղել, մինչդեռ իրականում միայն անգործ կանգնել էր նրա թիկունքում, մինչ քույրը տարբեր սրվակներ էր վերցնում-դնում, ու դեռ մի բան էլ վախեցրեց նրան, երբ քույրը շրջվեց: Սրվակներից մեկն ընկավ հատակին ու փշրվեց, բեկորը վնասեց Գրեգորի դեմքը, այրող հատկության ինչ-որ հեղուկ հոսեց նրա դեմքի վրայով: Առանց լռվել-մնալու Գրետան այնքան սրվակ վերցրեց, որքան կարող էր հետը տանել, ու դրանց հետ նետվեց մոր մոտ՝ դուռը ոտքով արագ վրա խփելով: Գրեգորը հիմա զատված էր մորից, որը հաստատ իր մեղքով էր այս պահին հավանաբար մահվան դուռը հասել: Նրան չէր կարելի բացել դուռը, եթե, իհարկե, չէր ուզում այնտեղից քշել քրոջը, որը հիմա պետք է մոր կողքին լիներ: Հիմա նրան սպասելուց բացի ուրիշ ոչինչ չէր մնացել: Ինքնիրեն նախատելով ու մտահոգ՝ նա սկսեց սողալ սենյակում. սողաց ամեն ինչի վրայով՝ պատերի, կահույքի, առաստաղի վրայով անցավ ու ի վերջո՝ հուսահատ, երբ ամբողջ սենյակը սկսեց պար գալ նրա շուրջը, ընկավ լայն սեղանի ուղիղ մեջտեղը:

Շատ ժամանակ չէր անցել, Գրեգորը ուժասպառ պառկել-մնացել էր, շուրջը լռություն էր տիրում: Գուցե դա լավ նշան էր:

Դռան զանգը տվեցին:

Աղախինը, անշուշտ, փակվել էր իր սենյակում, այնպես որ Գրետան պետք է գնար բացելու: Հայրիկն էր եկել:

– Ի՞նչ է պատահել:– առաջին հերթին հետաքրքրվեց նա: Գրետայի տեսքը հավանաբար ամեն ինչ մատնել էր: Նրա պատասխանը խուլ հնչեց. հաստատ խոսում էր՝ դեմքը հոր կրծքին սեղմած:

– Մայրիկն էր ուշաթափվել, բայց հիմա արդեն լավ է: Գրեգորն է իր սենյակից դուրս պրծել:

– Ախր ես սպասում էի դրան,– խոսեց հայրը:– Ախր ես ասում էի ձեզ, բայց դե կին եք, չէ: Ինչ ձեր բանն է լսելը:

Գրեգորի համար պարզ էր, որ հայրը Գրետայի տված կարճ տեղեկությունը վատ է մեկնաբանել: Հիմա նա հաստատ ենթադրում էր, թե Գրեգորն իր ինչ-որ բռնի արարքով մեղք է գործել: Հոր զայրույթը մեղմելու համար հիմա նա պարտավոր է հոր սիրտն առնել, որովհետև նրան բացատրություն տալու համար նա ոչ ժամանակ ուներ, ոչ էլ հնարավորություն: Իր ընկած տեղից նա վազ տվեց դեպի իր սենյակի դուռը, և այնպես սեղմվեց դրան, որ հայրը միջանցք մտնելու պահից արդեն կարողանար անմիջապես հասկանալ, որ Գրեգորը լավագույն մտադրությամբ է այստեղ, որ ցանկանում է անմիջապես իր սենյակը վերադառնալ, և որ անհրաժեշտություն չկա նրան ետ քշել, այլ անհրաժեշտ է ընդամենը բացել դուռը, և ինքը իսկույն կանհետանա:

Սակայն հայրը նման նրբանկատության տրամադրություն չուներ:

– Ա՛խ,– միջանցք մտնելուն պես այնպես աղաղակեց նա, կարծես միաժամանակ և զայրացած էր, և ուրախ: Գրեգորը գլուխը ետ տարավ դռնից ու շուռ տվեց հոր կողմը: Նման տեսքով նա մինչև հիմա իսկապես դեռ չէր պատկերացրել հորը: Պետք է ասել, որ վերջին ժամանակներում ձեռք բերած իր նոր՝ սողալով շարժվելու ունակությամբ պայմանավորված, նա

մոռացել էր առաջվա պես հետաքրքրվել ընդհանրապես բնակարանում տեղի ունեցող անցուդարձով, և իրականում ստիպված էր ուշադրություն դարձնել այն բանին, որ համապատասխաներ փոփոխման ենթարկված հարաբերություններին: Մինչդեռ, մինչդեռ, մի՞թե դիմացը կանգնած մարդը հայրն էր: Այն նույն մարդը, որը հոգնած պառկած էր լինում անկողնու մեջ ծածկված, երբ Գրեգորը իր գործնական ճամփորդությանն էր ելնում, որը իր տուն վերադառնալու երեկոները դիմավորում էր իրեն քնազգեստը հագին թիկնաթոռին նստած՝ բնավ ի վիճակի չլինելով վեր կենալ, այլ միայն ի նշան ուրախության ձեռքերն էր բարձրացնում, և որը իրենց հազվադեպ համատեղ զբոսանքների ժամանակ՝ տարվա մեջ մի քանի կիրակի ու տոն օրերին, առանց այն էլ դանդաղ ընթացող մոր ու Գրեգորի արանքում, իր հին վերարկուի մեջ պարուրված ու զգուշորեն հենվելով կեռ ձեռնափայտին՝ մի փոքր ավելի դանդաղ էր շարժվում և հենց որ ցանկություն էր ունենում որևէ բան ասելու, կանգնում էր լուռ և իր շուրջն էր խմբում իրեն ուղեկցողներին:

Մինչդեռ հիմա նա բավական պինդ տեսք ուներ: Հագին դեղին կոճակներով կապույտ կիպ համազգեստ էր, ինչպիսիք բանկային հաստատությունների ծառայողներն էին հագնում: Պատմուճանի բարձր ու ձիգ օձիքի վրա ծավալվում էր նրա մսեղ կրկնակզակը, խճճված հոնքերի տակից թափանցում էր սև աչքերի զվարթ ու ուշադիր հայացքը, սովորաբար խռիվ ճերմակ մազերը հերաբաժանով բծախնդրորեն կիսված ու սղալած-փայլեցված էին: Նա գլխարկը, որի վրա ոսկետառ միացագիր կար և հավանաբար բանկի անունն էր ներկայացնում, ամբողջ սենյակով մեկ կորագծով զայրացած նետեց բազմոցին և ծառայողի իր երկար պատմուճանի փեշերը ետ տարած, ձեռքերը տաբատի գրպանները դրած՝ մռայլադեմ քայլեց Գրեգորի կողմը: Նա ինքն էլ հաստատ չգիտեր, թե ինչ էր մտքինը, բայց ոտքերն անհավատալիորեն վեր էր բարձրացնում, և Գրեգորը զարմացած էր նրա կոշիկների այդքան խոշոր ներբաններից: Հայրը շարունակ քայլում էր, և Գրեգորը իրեն պարտադրված այս նոր

կյանքի հենց առաջին օրվանից էլ գիտեր, որ հայրը իր հանդեպ միմիայն մեծագույն խստությամբ է տրամադրված: Նա վազում էր հոր դիմացն ընկած, երբ հայրը կանգնում-մնում էր, ինքն էլ էր լռվում, և նորից առաջ էր շտապում, հենց որ հայրը շարժվում էր: Այդպես նա սենյակի մեջ մեծաքանակ պտույտներ գործեց՝ առանց որևէ էական բան անելու, առանց իր դանդաղ ընթացքի պատճառով հետապնդման տպավորություն թողնելու: Եվ այդ էր պատճառը, որ Գրեգորն առայժմ մնում էր հատակին: Նա վախենում էր, թե հայրը կարող է պատերի ու առաստաղի վրայով իր վազքը ինչ-որ առանձնահատուկ չարության դրսևորում համարել, և պարտավոր էր խոստովանել, որ ինքն այս վազվռտուքին երկար չէր դիմանա, որովհետև մինչ հայրը մի քայլ էր անում, ինքը ստիպված էր լինում անհամար շարժումների դիմել: Իրեն զգացնել տվեց նաև շնչահեղձությունը, թեև նա նախկինում էլ մի երևելի թոքեր չէր ունեցել: Եվ երբ նա այդպես առաջ էր փախչում՝ ջանալով ուժերը հավաքել վազելու համար, աչքերը կուլ էին գնում. սեփական ծանծաղամտության պատճառով գլուխն ազատելու որևէ այլ հնար չէր գտնում, քան փախչելն էր, ու համարյա թե մոռացել էր, որ պատերն ազատ էին, որ թեև այստեղ նախշերով ու զարդերով պատված կահույքով էին կահավորված, բայց ազատ էին:

Այդ պահին հենց կողքին թույլ նետված մի բան ընկավ ու գլորվեց դիմացը: Խնձոր էր: Հաջորդ պահին երկրորդ խնձորը թռավ նրա հետևից: Գրեգորը սարսափից մնաց կանգնած. վազելով փախչելը հիմա իմաստ չուներ, որովհետև հայրը որոշել էր ռմբակոծել իրեն: Ցածրիկ պահարանին դրած մրգամանից նա գրպանները խնձորներ էր լցրել ու հիմա առանց նախապես նշան բռնելու, իրար հետևից նետում էր իր վրա: Այդ փոքր, կարմիր խնձորները լիցքավորված, առաձգական մասնիկների նման գլորվում էին հատակի վրա և իրար էին բախվում, առանց նշան բռնելու նետված խնձորներից մեկը ձաղկեց Գրեգորի մեջքը, սակայն վնաս չպատճառելով ընկավ հատակին, մինչդեռ դրան հաջորդած խնձորը իսկապես խրվեց մեջքը: Գրեգորը փորձեց առաջ տանել մարմինը, կարծես թե անսպասելի, անհավատալի





ցավը կարող էր տեղը փոխելու հետ անցնել, սակայն նրան թվում էր, թե մեխված է տեղում ու կատարյալ շփոթության մեջ ուշաթափվեց: Միայն մի վերջին հայացքով նա դեռ նկատեց, թե ինչպես բացվեց իր սենյակի դուռը և ճչացող քրոջից առաջ ընկած մայրը շտապեց իր կողմը: Նրա մարմնի վերևի մասը միայն մի շապիկ էր ծածկում, որովհետև քույրը հանել էր շորերը, որպեսզի նրան իր շնչահեղձության մեջ շնչելու հնարավորություն տար, ապա տեսավ, թե ինչպես մայրը նետվեց հոր կողմը, և ճամփին արձակված փեշերը մեկը մյուսի ետևից սահում էին գետնին, ու նա շտապում էր դրանց մեջ խճճվելով, Գրեգորը հասցրեց նկատել, թե ինչպես մայրը առաջ մղվեց հոր կողմը և նրան գրկելով, նրա հետ մեկ մարմին կազմած, հոր ծոծրակը ափերի մեջն առած խնդրում էր նրան խնայել Գրեգորի կյանքը:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

Գրեգորի ծանր վերքը, որ մոտ մի ամիս տանջեց նրան – ոչ ոք չէր համարձակվում հեռացնել խնձորը, իբրև տեսանելի հիշատակ այն խրվել, մնացել էր մսի մեջ – թվում էր, թե հորն էլ էր հիշեցնում այն մասին, որ, անկախ իր ունեցած ներկայիս տխրեցնող ու զզվանք պատճառող տեսքից, Գրեգորը ընտանիքի անդամ էր, ում ոչ մի դեպքում չէր կարելի իբրև թշնամու վերաբերվել, այլ նրա հանդեպ ընտանիքի անդամին վայել պատվիրանն էր գործում և պարտադրում էր, որ հարկավոր է զզվանքը կուլ տալ ու հանդուրժել ընտանիքի անդամին. միմիայն հանդուրժել և ուրիշ ոչինչ:

Ու թե Գրեգորը իր ստացած վերքի պատճառով հավանաբար մեկընդմիշտ կորցրել էր իր շարժունակությունը, և առայժմ իր սենյակով շարժվելու համար հաշմված ծերունու նման երկար, երկար րոպեներ էին անհրաժեշտ նրան (պատերի ու առաստաղի վրայով սողալու մասին խոսք անգամ չէր կարող լինել), ապա նա իր վիճակի վատացման համար, իր կարծիքով, միանգամայն բավարար փոխհատուցում ստացավ այն տեսքով, որ յուրաքանչյուր երեկո հյուրասենյակի դուռը, որ նա մինչ այդ պահը մեկ կամ երկու ժամ զննելու սովորություն ուներ, բացվում էր, այնպես որ ինքը, իր սենյակի մթության մեջ պառկած, հյուրասենյակում նստածների համար

աննկատ մնալով, իրավունք էր ստացել ամբողջ ընտանիքին տեսնել լուսավորված սեղանի շուրջը նստած ու լսել, բնականաբար ընդհանուրի թույլտվությամբ, նրանց զրույցները:

Իհարկե, դրանք այլևս անցած-գնացած ժամանակների աշխույժ զրույցները չէին, որոնց մասին Գրեգորը հյուրանոցների փոքր սենյակներում գտնվելու ժամանակ հիշում էր՝ որոշակի պահանջ-կարոտ զգալով, երբ հոգնած՝ ստիպված էր լինում իրեն խոնավ անկողինը գցել: Ընթրիքից շատ չանցած հայրը շուտով ննջում էր իր բազկաթոռի մեջ, մայրն ու քույրը զգուշացնում էին իրար, որ կամաց խոսեն, մայրը, լույսի տակ խոր կռացած, նուրբ սպիտակեղեն էր կարում նորաձևության ինչ-որ սրահի համար, քույրը, որ վաճառողուհու հաստիք էր ստացել, իրիկունները սղագրություն և ֆրանսերեն էր սովորում, որպեսզի ավելի ուշ, հնարավորություն առաջանալու դեպքում ավելի բարձր պաշտոն ստանար: Հայրը երբեմն արթնանում էր և, կարծես անտեղյակ էր, թե քնած էր եղել, դիմում էր մորը. «Այսօր այս ինչքան էլ երկար ես կարում»,– ասում էր նա, ապա նորից էր աչքը խփում, իսկ մայրն ու քույրը հոգնած ժպտում էին միմյանց:

Յուրօրինակ համառությամբ հայրը հակառակվում էր անգամ տանը հագից հանել ծառայողի իր համազգեստը, ու մինչ նրա քնազգեստը անսպատակ կախ ընկած մնում էր զգեստի կախիչից, հայրը շորերը հագին դանթում էր իր տեղում՝ կարծես ցույց տալով, թե ինքը միշտ պատրաստ է՝ կատարելու իր պարտականությունը և անգամ այստեղ է սպասում իր ղեկավարի կարգադրությանը: Նման պահվածքի հետևանքով արդեն ի սկզբանե ոչ նոր համազգեստը, հակառակ մոր ու քրոջ՝ այն մաքուր պահելու հոգածությանը, կորցրել էր մաքրությունը, և Գրեգորը երեկոներ շարունակ իր աչքի առաջ տեսնում էր կեղտաբծերով ծածկված, բայց միշտ իր դեղին կոճակներով փայլփլող հանդերձը, որոնցով ծեր մարդը թեև ոչ այնքան հարմար, բայց հանգիստ քնած էր:

Հենց ժամացույցը ժամը տասն էր խփում, մայրը փորձում էր ոչ բարձր ձայնով արթնացնել հորը և ապա համոզել նրան անկողին մտնել,

որովհետև այսպես նստած նա ինչպես հարկն է չէր քնում, մինչդեռ հոր համար, որը ժամը վեցին պետք է իր ծառայության տեղում լիներ, դա անչափ անհրաժեշտ էր: Սակայն այնպիսի մի համառությամբ, որ համակել էր նրան այն օրվանից, ինչ ծառայության էր անցել, հայրը միշտ ձգտում էր ավելի երկար մնալ սեղանի մոտ նստած ու թեև կանոնավոր ննջում էր, դեռ մի բան էլ հարկավոր էր լինում մեծագույն ջանքեր թափել, որ հաջողվեր համոզել նրան բազկաթոռի փոխարեն անկողնում քնել: Ու թեկուզ ինչքան էլ մայրն ու քույրը կարճ հիշեցումներով փորձեին նրա վրա ազդել, մոտ քառորդ ժամի չափ նա դանդաղ թափահարում էր գլուխը, նստում էր աչքերը փակ ու չէր ուզում ելնել տեղից: Մայրը քաշում էր նրա թևքից, ականջին հաճելի բառեր էր ասում, քույրը թողնում էր իր վարժություններն ու ձգտում էր օգնել մորը, սակայն հոր վրա դրանք չէին ազդում. նա միայն ավելի խորն էր ընկղմվում իր բազկաթոռի մեջ: Ու այնժամ միայն, երբ կանայք բռնում էին թևատակերից, բացում էր աչքերը, փոխնիփոխ նայում էր մորն ու քրոջն ու սովորություն ուներ ասելու. «Սա էլ կյա՞նք է: Սա՞ է իմ ծեր օրերի հանգիստը»: Ապա հենվելով երկու կանանց վրա՝ անվարժ վեր էր կենում տեղից, կարծես հենց ինքն էր իր համար մեծագույն բեռը, թողնում էր, որ երկուսով ուղեկցեին իրեն մինչև իր սենյակի դռները, այնտեղ ազատվում էր նրանց ուղեկցությունից ու ինքնուրույն էր շարունակում իր ընթացքը, իսկ մայրը շտապ մի կողմ էր թողնում իր կարը, քույրը՝ իր գրիչը, որ վազեին հոր ետևից ու այնտեղ էլ օգնեին նրան:

Աշխատանքից տանջահար ու գերհոգնած այս ընտանիքում էլ ո՞վ ժամանակ ուներ Գրեգորի մասին պետք եղածից ավելին անելու չափ հոգալ:

Տնտեսության հետ կապված ծախսերը շարունակ կրճատվում էին:

Աղախնին արդեն ազատել էին: Մի հսկա, լայնոսկր, գլուխը սպիտակ մազերով օղակված սպասուհի էր գալիս առավոտյան ու երեկոյան, որ ամենածանր աշխատանքները կատարեր, իսկ մնացած գործերը իր մեծաքանակ կարուձևի հետ միասին անում էր մայրը: Նույնիսկ այնպես ստացվեց, որ

թվագրել է 1915-ից հետո գրած

ընտանեկան զարդեղենի մեծ մասը, որ նախկինում մայրն ու քույրն էին չափազանց երջանիկ խնջույքներին և տոն օրերին կրում, վաճառվեցին, իսկ Գրեգորն այդ մասին իմացավ, երբ երեկոյան խոսում էին, թե որքան փող են ստացել վաճառքից: Ամենամեծ դժգոհությունը, սակայն, այն էր, որ ընտանիքը չէր կարողանում ներկա պայմանների համար անչափ մեծ բնակարանը թողնել, որովհետև հնարավոր չէր մտածել, թե ինչպես էր կարելի Գրեգորին տեղափոխել: Սակայն Գրեգորը շատ էլ լավ տեսնում էր, որ բնակարանը փոխելուն խանգարող պատճառը միայն ինքը չէր, որովհետև իրեն կարող էին օդափոխման մի քանի անցք ունեցող մեծ արկղի մեջ դրած տեղափոխել, իսկ այն, ինչը որ ընտանիքին ետ էր պահում բնակարանը փոխելու մտքից, ավելի շուտ կատարյալ հուսակտուր վիճակն էր և այն միտքը, թե իրենք այնպիսի դժբախտությունից են տանջվում, ինչպիսին դեռ ոչ ոք չէր տեսել իրենց ծանոթ-բարեկամներից: Ինչը որ աշխարհն էր պահանջում այս խեղճ մարդկանցից, նրանք անում էին մինչև վերջ. հայրը բանկի ամենացածր պաշտոնյային նախաճաշ էր հասցնում, մայրը չարչարում էր իրեն անծանոթ մարդկանց սպիտակեղենի համար, քույրը, գնորդների կամայականությանը հնազանդ, վաճառասեղանի ետևում այսուայնկողմ էր վազվզում, բայց դրանից ավելին անելու համար ընտանիքի անդամների ուժերը չէին բավականացնում: Եվ Գրեգորի մեջքի վերքը սկսում էր նվվալ, ասես նոր առաջացած լիներ, երբ մայրն ու քույրը հորն անկողին դնելուց հետո ետ էին դառնում, գործը թողած նստում էին կողք կողքի, համարյա այտ այտի տված, և մայրը, Գրեգորի սենյակի կողմը ցույց տալով, ասում էր. «Այդ դուռը փակիր, Գրետա»: Եվ մինչ Գրեգորը իր սենյակում մնում էր մթության մեջ, կանայք այստեղ լաց էին լինում իրար գրկած կամ էլ նստում էին՝ վշտատոչոր աչքերը սեղանին հառած: Օրերն ու գիշերները Գրեգորը անց էր կացնում համարյա առանց քնելու: Երբեմն նա պատկերացնում էր, թե հենց հաջորդ օրը, հենց որ իր սենյակի դուռը բացվի, ինքն առաջվա պես իր ձեռքը կառնի ընտանիքի գործերը, նրա մտքում ժամանակների հեռվից նորից հայտնվում էին ղեկավարն ու կառավարիչը, գործավարներն ու աշակերտները, ծանծաղամիտ



դռնապահը, մյուս ֆիրմաներից երկու-երեք ընկերը, գավառական հյուրանոցներից մեկի սպասուհին՝ տաք, սիրելի ու անցողիկ մի հիշողություն, գլխարկների խանութի դրամարկղի այն կինը, ում հետ ինքը ձգտում էր լուրջ, բայց դանդաղ կապ հաստատել. սրանք բոլորը գալիս էին նրա աչքերի առաջ օտար ու մոռացված դեմքերի հետ խառը, ու փոխանակ օգնեին իրեն ու իր ընտանիքին, միանգամայն անհասանելի էին, և Գրեգորը գոհ էր մնում, երբ նրանք նորից անհետանում էին: Հետո, սակայն, այլևս ցանկություն չէր ունենում հոգալ իր ընտանիքի մասին, միայն զայրույթն էր համակում նրան վատ խնամքի պատճառով, ու թեև չէր պատկերացում, թե ինչ էր ուզածը, ինչի ախորժակ ուներ, ծրագրեր էր կազմում, թե ինչպես կարող էր հասնել իրենց սննդամթերքի մառանը, որպեսզի այնտեղ, անգամ եթե սոված էլ չլիներ, սեփական ձեռքերով վերցներ այն, ինչին, սեփական պատկերացմամբ, արժանի էր:

Հիմա այլևս առանց շատ մտմտալու, թե ինչով էր կարելի Գրեգորին առանձնահատուկ հաճույք պատճառել, քույրը՝ հապճեպ,



նախքան առավոտյան ու կեսօրին գործի վազելը ոտքով որևէ մի բան էր հրում Գրեգորի սենյակը, որպեսզի ավելի ուշ՝ երեկոյան, միանգամայն անտարբեր արդեն, թե իր տված կերը փորձվել էր գոնե, թե բոլորովին ձեռք չէր տվել, ինչը վերջերս ավելի հաճախ էր պատահում, ավելի մի հարվածով հավաքեր-թափեր: Սենյակը մաքրելը, որ հիմա արդեն միայն երեկոյան ժամերին էր արվում, այլևս արդեն հնարավոր չէր ավելի արագ անել: Պատերի երկայնքով աղբի երիզներ էին ձգվում, այսուայնտեղ փոշու և կեղտի գնդիկներ էին ընկած: Սկզբի օրերին, երբ քույրը գալիս էր, Գրեգորը այնպիսի մի երևացող անկյունում էր դիրք գրավում, որ նրան իր կանգնած տեղից հասկացներ իր դժգոհությունը: Բայց նա թեկուզ շաբաթներով էլ մնար այնտեղ կանգնած, քրոջ վերաբերմունքն ամենևին էլ չէր փոխվի. կուտակված աղբը նա տեսնում էր այնպես, ինչպես որ Գրեգորն էր տեսնում, սակայն հենց ինքն էլ մտադրվել էր եղածն այդպես թողնել: Ընդ որում, քույրը իր համար միանգամայն նոր զգացողություն էր ձեռք բերել, որ Գրեգորի սենյակը հավաքելը զուտ իր իրավասությունն է մնում:

Մի անգամ մայրը Գրեգորի սենյակը հիմնովին մաքրեց, ինչը նրան մի քանի դույլ ջուր օգտագործելուց հետո միայն հաջողվեց,– անչափ մեծ խոնավությունը, ճիշտ է, Գրեգորին էլ էր վշտացրել, և նա դառնացած ու անշարժ մեկնվել էր բազմոցին,– իսկ մայրիկին չհաջողվեց խուսափել պատժից:

Հազիվ էր նույն երեկոյան քույրը Գրեգորի սենյակում փոփոխությունը նկատել, երբ, ծայրաստիճան վիրավորված, թափով մտավ հյուրասենյակ ու չնկատելու տալով, թե ինչպես էր մայրը աղաչանքով իրեն պարզել ձեռքերը, ջղաձիգ լացով պոռթկաց, ինչից զարմացած (հայրը, բնականաբար,

վախից վեր թռավ իր բազկաթոռից), ծնողները սկզբում կարկամել ու անօգնական նայում էին նրան, մինչև որ սկսեցին արձագանքել. աջից հայրն էր նախատում մորը, որ նա Գրեգորի սենյակը մաքրելու գործը աղջկան չէր թողել, ձախից Գրետան էր ճչում, թե ինքն այլևս ոտք չի դնի Գրեգորի սենյակն ու չի հավաքի այնտեղ, իսկ մայրը փորձում էր հորը (նա այնքան էր հուզված, որ չգիտեր ինչ աներ) ննջասենյակ տանել, քույրը, հեծկլտալուց ցնցվելով, փոքրիկ բռունցքներով թմբկահարում էր սեղանը, իսկ Գրեգորը զայրույթից ֆշշացնում էր, որ ոչ մեկի մտքով չէր անցնում դուռը վրա դնել ու խնայել իրեն այդ տեսարանից ու աղմուկից:

Բայց եթե անգամ իր մասնագիտական աշխատանքից հոգնած քույրն այլևս անկարող էր առաջվա նման հոգ տանել Գրեգորի մասին, ապա բոլորովին էլ կարիք չկար, որ մայրը նրա համար մի բան աներ, ու ոչ էլ պետք էր, որ Գրեգորն իրեն անուշադրության մատնված զգար, որովհետև հիմա արդեն աղախին կար տանը:

Տարիքն առած այս այրին, որն իր ամուր ոսկրային կառուցվածքի շնորհիվ կյանքում ամենադժվար բաներին էր դիմացել, բացարձակ ոչ մի վախ ու զզվանք չէր զգում Գրեգորից: Բնավ ոչ հետաքրքրասիրությունից դրդված՝ նա մի անգամ բացել էր Գրեգորի սենյակի դուռը ու, նրա տեսքից (ամբողջովին անակնկալի եկած Գրեգորը սկսել էր սենյակում այսուայնկողմ վազվզել, թեև նրան ոչ ոք չէր հալածում) զարմացած, ձեռքերը ծնկներին դրած, քար էր կտրել: Այդ օրվանից սկսած նա օր չէր եղել, որ առավոտյան ու երեկոյան հպանցիկ մի փոքր չբացեր դուռն ու ներս՝ Գրեգորին չնայեր: Սկզբի օրերին նա նույնիսկ նրան մոտ էր կանչում այնպիսի բառերով, որ, հավանաբար, մտերմիկ էր համարում, ինչպես, ասենք, «Հլը մի էստեղ արի, կեղտի բզեզ»: Նման դիմելաձևին Գրեգորը ոչ մի կերպ չէր պատասխանում, այլ անշարժ մնում էր պառկած, կարծես ամենևին էլ չէին բացել դուռը: Կարող էին, չէ՛, այս աղախնին կարգադրել, որ փոխանակ իր հաճույքի համար Գրեգորին ավելորդ տեղը անհանգստացներ, ավելի լավ է ամեն օր այս սենյակը մաքրեր:

Մի անգամ վաղ առավոտյան (հորդ անձրևը, որ, հավանաբար, մոտալուտ գարնան նախանշանն էր, ծեծում էր լուսամուտի ապակիները) Գրեգորը նոր աղախնի նման դիմելաձևից այնքան էր դառնացած, որ կարծես նրա վրա նետվելու մտադրությամբ, թեև դանդաղ ու անճկուն, բայց վճռական շուռ եկավ նրա կողմը: Սակայն աղախինը, փոխանակ վախենալու, պարզապես ձեռքն առավ դռանը մոտ դրված աթոռը, բարձրացրեց այն, ու բերանը լայն բացած կանգնելուց պարզ դարձավ մտադրությունը, որ կփակեր բերանը միայն այն ժամանակ, երբ ձեռքն առած աթոռը շրմփացներ Գրեգորի մեջքին:

– Հը՞: Շարունակե՞նք,– հարցրեց, երբ Գրեգորը կրկին շուռ եկավ: Եվ նա աթոռը հանգիստ դրեց իր տեղը:

Գրեգորը հիմա արդեն համարյա ոչինչ չէր ուտում: Միայն երբ պատահաբար անցնում էր իր համար նախատեսված կերակուրի մոտով, հենց այնպես մի պատառ էր առնում բերանը, ժամերով պահում էր ու հետո մեծ մասամբ թքում էր այն: Սկզբում նրան թվում էր, թե դրա պատճառը սենյակում իրեն շրջապատող տխուր մթնոլորտն է, ու դա է իրեն ետ պահում սնվելուց, բայց հենց սենյակի փոփոխությունների հետ նա անչափ շուտ համակերպվեց:

Տան անդամները սովորել էին. այն իրերը, որոնց համար ուրիշ ոչ մի տեղ չէին գտնում, նրա սենյակն էին խցկում, ու նման իրեր հիմա արդեն բավական շատ էին կուտակվել, որովհետև նրանք բնակարանի սենյակներից մեկը վարձով ապրող երեք տղամարդու էին տրամադրել:

Լուրջ արտաքինով այս պարոնները (Գրեգորը մի անգամ դռան արանքից տեսել էր նրանց, բոլոր երեքն էլ մորուք էին պահում) մաքրության հարցում բծախնդիր էին. ոչ միայն իրենց սենյակում, այլև, քանզի հանգամանքների բերումով այստեղ էին վարձով մնում, ամբողջ բնակարանում և առաջին հերթին խոհանոցում: Ավելորդ, անգամ կեղտոտ իրեր տանել չէին կարողանում: Դրանից զատ նրանք իրենց կահույքի մեծ մասը հետներն էին բերել, և դա էր պատճառը, որ տան իրերից շատերը ավելորդ էին

դարձել, որոնք թեև վաճառքի ենթակա չէին, բայց և ափսոս էր դեն նետել: Դրանք բոլորը ճանապարհվում էին Գրեգորի սենյակ: Նաև մոխրի ամանը կամ խոհանոցի աղբամանը: Այն ամենը, ինչ տվյալ պահին գործածության համար պիտո չէր, աղախինը, որն այս հարցերում հապաղել չգիտեր, շպրտում էր Գրեգորի սենյակը: Գրեգորը, բարեբախտաբար, մեծ մասամբ տեսնում էր հերթական իրն ու այն բռնած ձեռքը: Աղախինը հավանաբար մտադիր էր հետագայում, ժամանակ գտնելու և առիթի դեպքում, այդ բոլոր իրերը կրկին հեռացնել այդտեղից կամ բոլորը միասին միանգամից դուրս նետել, սակայն առայժմ դրանք մնում էին այնտեղ ընկած, ուր հայտնվել էին նետվելու պահից, եթե միայն Գրեգորը ներսում կուտակվածի արանքներով չէր շարժվում ու դրանք շարժման մեջ դնում. նախ պարտադրված, որովհետև նրան սողալու համար առանձնապես տեղ չէր մնացել, իսկ ավելի ուշ՝ աճող հաճույքով, թեև նման շարժումներից հետո նա, մահու չափ հոգնած ու տխուր, կրկին ժամերով չէր շարժվում:

Քանի որ կենվորները երբեմն-երբեմն տանը, ընդհանուր հյուրասենյակում էին ընթրում, երեկոներ էին լինում, որ

հյուրասենյակի դուռը փակ էր մնում, բայց Գրեգորը շատ հեշտ հրաժարվեց դուռը բաց տեսնելու սովորությունից, որովհետև եթե անգամ երբեմն այն բաց էլ էր լինում, ինքը դրանից չէր օգտվում, այլ մնում էր իր սենյակի ամենամութ անկյունում պառկած, թեև գիտեր, որ տանը ոչ ոք դրա վրա ուշադրություն չի դարձնում:

Մի անգամ, սակայն, աղախինը հյուրասենյակի դուռը փոքր-ինչ բաց էր թողել, այն այդպես էլ բաց էր մնացել, մինչև որ կենվորները երեկոյան եկան ու լույսը վառեցին: Նրանք նստեցին սեղանի վերևում, ուր նախկինում հայրը, մայրը և Գրեգորն էին նստում հաց ուտելիս, բացեցին անձեռոցիկներն ու ձեռքներն առան դանակ-պատառաքաղը: Դռան մեջ անմիջապես հայտնվեց մսով լի ամանը ձեռքին մայրը, իսկ անմիջապես նրանից հետո քույրը՝ կարտոֆիլով ափսեով: Կերակուրից թանձր գոլորշի էր բարձրանում: Կենվորները կռացան իրենց դիմաց դրված ափսեների վրա, կարծես միտք ունեին ուտելուց առաջ ստուգել դրանք, և իսկապես, նրանցից մեկը, որ մեջտեղն էր նստած և մյուս երկուսի համար հեղինակություն էր համարվում, կտրատեց միսը հենց ամանի մեջ, որ տեսներ՝ արդյոք բավական փափուկ է, թե հարկ կլինի նորից ետ ուղարկել խոհանոց: Նա գոհ էր, մայրն ու քույրը, որ լարված նայում էին ու սպասում, սկսեցին խոր շունչ քաշելով ժպտալ:

Ընտանիքի անդամները խոհանոցում էին սնվում: Անկախ դրանից հայրը մինչև խոհանոց գնալն այդ սենյակն էր մտնում և գլխարկը ձեռքին բռնած թեթևակի խոնարհվելուց հետո մի պտույտ էր գործում սեղանի շուրջը: Կենվորները ոտքի էին կանգնում և մազ-մորուքների մեջ ինչ-որ բան էին մռթմռթում: Հետո երբ մենակ էին մնում, ուտում էին համարյա բացարձակ լռության մեջ: Գրեգորի համար տարօրինակ էր, որ ուտելու ժամանակ հնչող



բոլոր տեսակի ձայներից միայն նրանց ծամող ատամների կրճտոցն էր լսում, կարծես դրանով Գրեգորին ցույց տային, որ ուտելու համար հարկավոր է ատամ ունենալ, և եթե նույնիսկ գեղեցկագույն, բայց անատամ ծնոտներ ունենաս, ոչինչ չես կարողանա անել:

– Համա թե ախորժակ ունեմ,– մտահոգ մրմնջում էր Գրեգորը:– Բայց սիրտս նման բաներ չէ, որ ուզում է: Հապա մի տես, թե այս կենվորներն ինչպես են այստեղ սնվում, իսկ ես մահանում եմ:

Հենց այդ երեկո խոհանոցից ջութակի նվագ լսվեց:

Գրեգորը չէր հիշում, որ այդ ամբողջ ժամանակ քույրը նվագած լիներ:

Կենվորներն արդեն ավարտել էին իրենց ընթրիքը, մեջտեղի նստածը ինչ-որ լրագիր էր վերցրել, մյուս երկուսին մեկական թերթ էր տվել, ու հիմա նրանք թիկն տված կարդում էին ու ծխում:

Երբ ջութակի ձայնը հնչեց, նրանք լարեցին իրենց ուշադրությունը, բարձրացան տեղներից ու ոտքերի ծայրերի վրա գնացին դեպի միջանցքի դուռը, որտեղ իրար սեղմված անշարժացան: Խոհանոցում երևի լսել էին նրանց շարժվելը, որովհետև հայրը ձայն տվեց.

– Գուցե պարոններին խանգարում է ջութակի նվա՞գը: Եթե ուզում եք, կարելի է անմիջապես դադարեցնել:

– Հակառակը,– առարկեց մեջտեղում կանգնած պարոնը:– Գուցե օրիորդը համաձայնվի մեզ մոտ՝ սենյակ գալ ու այստե՞ղ նվագել: Սենյակում ավելի հարմար ու տրամադրող կլինի:

– Իհարկե, խնդրեմ,– համաձայնեց հայրը, կարծես ինքը լիներ ջութակ նվագողը:

Կենվորները վերադարձան հյուրասենյակ ու սպասեցին այնտեղ:

Քիչ անց հայտնվեց հայրը նոտաների կանգնակը ձեռքին, մայրը՝ նոտաները բռնած, և ապա քույրը՝ ջութակը ձեռքին: Նա անշտապ դասավորեց ամեն ինչ նվագը սկսելու համար, ծնողները, որ նախկինում երբեք վարձով սենյակ տված չկային, ու երևի դա էր պատճառը, որ կենվորների

հանդեպ գերհարգալից էին, կաշկանդված էին ու չէին համարձակվում անգամ նստել իրենց սեփական աթոռներին: Հայրը ուսով հենվել էր դռանն ու մի ձեռքը մտցրել էր շքազգեստի երկու կոճակների արանքը, իսկ մայրն ընդունեց կենվորներից մեկի՝ իրեն առաջարկած աթոռն ու տեղավորվեց անկյունում՝ անգամ չտեղափոխելով աթոռը, ուր կենվորն էր հենց առաջին պահին դրել:

Քույրը սկսեց նվագել:

Հայրն ու մայրը, ամեն մեկն իր կողմից, սկսեցին հետևել նրա ձեռքերի շարժումներին:

Երաժշտությունից դյութված՝ Գրեգորը համարձակվել էր առաջ գալ ու գլխով համարյա թե հայտնվել էր հյուրասենյակում: Նա չէր զարմանում, որ վերջին ժամանակներում սակավ ուշադրություն էր դարձնում շրջապատում եղածների վրա, մինչդեռ նախկինում այդ նրբանկատությունը նրա հպարտության առարկան էր: Մինչդեռ հենց հիմա էր հարկավոր, որ նա չերևար մարդկանց աչքին, որովհետև փոշու պատճառով, որ իր սենյակում համատարած նստած էր ու մի թեթև շարժումից պար էր գալիս օդում, ինքն էլ էր ամբողջովին փոշեկոլոլ: Տարբեր տեսակի թելեր, մազեր, կերակուրի մնացորդներ էր քարշ տալիս նա իր մեջքին ու կողերին, մյուսների հանդեպ զգացած նրա անտարբերությունը անչափ մեծ էր, որ նախկինի նման օրվա մեջ մի քանի անգամ պառկեր գորգին ու քերվեր: Անկախ իր ներկայիս վիճակից՝ նա չերկյուղեց հյուրասենյակի անթերի փայլեցրած հատակի վրա մի քանի քայլ առաջ գալ:

Ի դեպ, նրա վրա ոչ ոք ուշադրություն չդարձրեց:

Ընտանիքը ամբողջովին կլանված էր ջութակի նվագով, իսկ կենվորները, որ սկզբում, ձեռքները տաբատների գրպանները դրած, անչափ մոտ էին կանգնած քրոջ նոտակալի թիկունքում ու այդպես բոլորով կարող էին նրա նոտաներին նայել, ինչը հաստատ պետք է որ խանգարեր քրոջը, քիչ անց կիսաձայն խոսելով ու գլուխները կախ հեռացան պատուհանի կողմը, որտեղ էլ, հոր մտահոգ հայացքների տակ, մնացին

կանգնած: Տպավորությունը հիմա իրոք այնպիսին էր, կարծես նրանք ջութակի գեղեցիկ ու տրամադրող երաժշտություն լսելու իրենց ենթադրության մեջ հիասթափված էին, արդեն կուշտ էին այստեղ իրենց ցուցադրվող ներկայացումից, ու բացառապես միայն քաղաքավարությունից դրդված էր, որ թույլ էին տալիս իրենց հանգիստը խախտել: Մանավանդ այն, թե ինչպես էին քթներից ու բերաններից իրենց սիգարների ծուխը դեպի առաստաղ բաց թողնում, տպավորություն էր թողնում, որ սաստիկ նյարդայնանում էին:

Մինչդեռ քույրը որքա՜ն գրավիչ էր նվագում:

Գլուխը նա պահել էր փոքր-ինչ կողք թեքած, կենտրոնացած ու տխուր աչքերը սահում էին նոտաների վրայով:

Գրեգորը մի փոքր էլ առաջ սողաց ու գլուխը սեղմեց հատակին, որ հնարավորության դեպքում կարողանար բռնել քրոջ հայացքը:

Գուցե, իրոք, նա ընդամենը մի անասուն էր, որ այդ աստիճան տարվել էր երաժշտությամբ: Նրան թվում էր, թե իր առաջ բացվել է դեպի երազած անծանոթ կերակուրները տանող ճանապարհը, նա մտադիր էր ընդհուպ մինչև քույրը սողալ, նրա փեշից քաշել ու հասկացնել դրանով, որ նա իր սենյակը գա, որովհետև այստեղ գտնվողներից ոչ ոք այնպես չէր գնահատի այդ երաժշտությունը, ինչպես ինքը կկարողանար գնահատել: Ինքն այլևս չէր թողնի, որ քույրը երբևէ դուրս գար սենյակից, գոնե այնքան ժամանակ, քանի դեռ ինքը ողջ էր, իր սարսափելի տեսքը կարող էր առաջին անգամ պիտանի լինել իրեն: Նա միաժամանակ կանգնած կլիներ իր սենյակի բոլոր դռների մոտ ու ներս մտնել համարձակվողների վրա կֆշշացներ, իսկ քրոջը հարկ չէր լինի ստիպողաբար մնալ սենյակում, այլ ինքնակամ, նա կնստեր իր կողքին, բազմոցին, գլուխը իր կողմը թեքած, և այդ պահերին ինքը կհավաստիացներ նրան, որ հաստատ մտադրություն է ունեցել նրան կոնսերվատորիա ուղարկելու, ու եթե այս ընթացքում պատահած դժբախտությունը չլիներ, ապա ինքը դեռ անցած Ծննդյան տոներին,– Ծննդյան տոները իրոք արդեն անցել են, չէ՞,– ինքը հայտարարած

կլիներ իր մտադրության մասին, առանց որևէ առարկություն ընդունելու: Իր այդ բացատրությունից հետո քույրը հուզմունքից արցունքներ կթափեր, իսկ Գրեգորը կբարձրանար մինչև նրա ուսերն ու կհամբուրեր նրա պարանոցը, որը քույրը խանութում աշխատել սկսելու օրվանից ժապավենից ազատ էր պահում ու օձիք էլ չէր կրում:

– Պարոն Զամզա,– հորը բղավեց մեջտեղի պարոնն ու առանց ավելորդ բառերի վրա ժամանակ կորցնելու ցուցամատը պարզեց դանդաղ առաջ սողացող Գրեգորի կողմը:

Ջութակը լռեց: Մեջտեղի պարոնը նախ գլուխը թափ տալով ժպտաց իր ընկերների ուղղությամբ, ապա հայացքը նորից ուղղեց Գրեգորի կողմը:

Հայրն ավելի նպատակահարմար համարեց նախքան Գրեգորին այստեղից քշելը առաջին հերթին կենվորներին հանգստացնել, թեև սրանք ամենևին էլ հուզված չէին, ու Գրեգորը հիմա նրանց ավելի էր զբաղեցնում, քան ջութակի նվագը: Հայրը շտապեց կենվորների կողմը և փորձեց տարածված ձեռքերով հեռացնել նրանց իրենց սենյակը, միաժամանակ նաև իր մարմնով խանգարել, որ նրանք Գրեգորի կողմը նայեին:

Այս պահին արդեն նրանք իսկապես փոքր-ինչ զայրացան, սակայն ընդհանրապես պարզ չէր՝ արդյոք պատճառը հոր պահվա՞ծքն էր, թե՞ միայն հիմա գիտակցված բացահայտումը, որ առանց տեղյակ լինելու իրենք իրենց կողքին Գրեգորի պես հարևան են ունեցել: Նրանք հորից սկսեցին բացատրություններ պահանջել, իրենք էլ իրենց կողմից բարձրացրին ձեռքերը, սկսեցին անհանգիստ քաշքշել իրենց մորուքները և միայն դանդաղ տեղի տալով քաշվեցին իրենց սենյակը: Այդ ընթացքում քույրը հասցրեց հաղթահարել շփոթմունքը, որ երաժշտության հանկարծակի ընդհատումն էր պատճառել նրան, որոշ ժամանակ թույլ կախված ձեռքերի մեջ ջութակն ու կնտնտոցը պահելուց հետո, կարծես դեռ մտադիր էր շարունակել նվագը, կտրուկ ազատվեց իրեն համակած կաշկանդումից, ձեռքի գործիքը դրեց մոր գիրկը (մոր մոտ շնչարգելություն սկսվեց, խոր շնչելու ապարդյուն փորձերից նա առաջվա պես

մնաց իր աթոռին նստած), ապա նետվեց այն հարևան սենյակի կողմը, որին կենվորներն էին հոր գործադրած ճնշմանը տեղի տալով արդեն ավելի արագ մոտենում: Կարելի էր տեսնել, թե ինչպես էին քրոջ վարժ ձեռքերի մեջ անկողինների վերմակներն ու բարձերը վեր-վեր ցատկոտում ու հարդարվում: Կենվորները դեռ չէին հասցրել մոտենալ սենյակին, նա արդեն կարգի էր բերել անկողիններն ու դուրս սողոսկել: Զգացվում էր, որ հայրն այն աստիճան է համակված սեփական համառությամբ, որ մոռացել էր ամեն մի հարգալից վերաբերմունք, որ պարտավոր էր ցուցաբերել իր կենվորների հանդեպ: Նա շարունակ ետ էր մղում նրանց, մինչև որ արդեն դռան մեջ կանգնած կենվորներից մեջտեղինը ոտքը աղմուկով խփեց հատակին ու միայն այդպես ստիպեց հորը կանգ առնել:

– Ես պարտավոր եմ հայտարարել,– ասաց նա, բարձրացրեց ձեռքը և հայացքով փնտրեց մորն ու Գրետային,– որ հաշվի առնելով այս բնակարանում ու այս ընտանիքում տիրող նողկալի հանգամանքները,– այս խոսքերն ասելով նա կտրուկ վճռականությամբ թքեց հատակին,– ես անհապաղ հրաժարվում եմ իմ սենյակից: Բացի դրանից, ես մտադիր չեմ որևէ բան վճարել այն օրերի համար, որ ես ապրել եմ այստեղ, ու մի բան էլ կմտածեմ դեռ, թե արդյոք որևէ, հավատացեք ինձ, որևէ բավական հեշտ հիմնավորված պահանջով ձեր դեմ դուրս չեմ գա:

Նա լռեց ու, կարծես ինչ-որ բանի էր սպասում, անթարթ նայեց:

Նույն պահին նրա երկու ընկերները հաստատեցին.

– Մենք էլ ենք անմիջապես հրաժարվում:

Մեջտեղի պարոնը ափի մեջ առավ դռան բռնակն ու արմուկով խփեց դուռը:

Հայրը խարխափող ձեռքերով երերաց դեպի իր բազկաթոռը և փլվեց մեջը: Նրա տեսքն այնպիսին էր, կարծես մեկնվել էր իր համար սովորական երեկոյան նինջի մեջ, սակայն նրա կողքի թեքված, գլխի անուժ ճոճքը մատնում էր, որ նա ամենևին էլ քնած չէ:



Ամբողջ ընթացքում Գրեգորը մնացել էր նույն տեղում պառկած, ուր նրան կենվորներն էին նկատել: Սեփական ծրագրերի ձախողման հետ կապված հիասթափությունը, գուցե նաև երկար ժամանակ կիսաքաղց մնալու հետևանքով թուլությունը անհնար էին դարձրել նրա շարժվելը: Նա սարսափում էր այն մտքից, թե հաջորդ պահին իր գլխին կթափվի բոլորին հանգստացնող մի հեղեղ, և սպասում էր: Նույնիսկ ջութակը չսթափեցրեց նրան, որ մայրիկի դողդղացող մատների արանքից ընկավ գրկից ու զրնգոց արձակեց:

– Սիրելի ծնողներ,– խոսեց քույրը և, որպես ներածական մաս, ափով խփեց սեղանին,– այսպես այլևս չի կարող շարունակվել: Գուցե դուք չեք կարողանում տեսնել դա, սակայն ես նկատում եմ: Այս հրեշի ներկայությամբ ես չեմ ուզում եղբորս անունն արտասանել, ուստի կասեմ միայն, որ մենք պարտավոր ենք փորձել ազատվելու սրանից: Մենք փորձել ենք մարդուն վայել ամեն բան սրան խնամելու և հանդուրժելու համար, և ես կարծում եմ, որ ոչ ոք մեզ չի կարող չնչին իսկ ամոթանք տալ:

– Նա հազար անգամ ճիշտ է,– խոսեց հայրը: Դեռևս հևասպառությունից

տառապող մայրը՝ աչքերի իմաստազուրկ արտահայտությամբ, սկսեց խուլ հազալ դիմացը պահած ափերի մեջ:

Քույրը շտապեց մոր կողմն ու ձեռքը սեղմեց նրա ճակատին: Զգացվում էր, որ հայրը, Գրետայի խոսքերի ազդեցությամբ, որոշակի մտքերի էր հանգել և հիմա ուղիղ նստել էր ու խաղում էր դեռ կենվորների ընթրիքից հետո սեղանին մնացած ափսեների արանքում դրված գլխարկի հետ ու նայում էր անշարժ պառկած Գրեգորին:

– Մենք պարտավոր ենք փորձել ազատվել սրանից,– հիմա արդեն բացառապես հորը դիմելով՝ խոսեց քույրը. հազի նոպայի մեջ մայրը ի վիճակի չէր հասկանալ նրան:– Նա ձեր երկուսին էլ կսպանի: Ես դա տեսնում եմ: Եթե մենք պարտավոր ենք այսպես ծանր աշխատել, էլ ինչպես կարող ենք տան մեջ այս տևական տանջանքը հանդուրժել: Ես որ չեմ կարող:– Եվ նա սկսեց այնպես լաց լինել, որ նրա արցունքները սկսեցին մոր դեմքի վրայով հոսել, իսկ մայրը մեխանիկորեն սրբում էր դրանք:

– Զավակս,– կարեկցանքով ու ակնհայտ ըմբռնումով խոսեց հայրը,– իսկ ի՞նչ անենք:

Ի նշան անօգնականության քույրը միայն ուսերը ցնցեց: Նրա երբեմնի ինքնավստահությունից բան չէր մնացել:

– Եթե միայն սա հասկանար մեզ,– կես հարցական խոսեց հայրը, Գրետան, արցունքներն աչքերին, կտրուկ թափ տվեց ձեռքը. այդ մասին խոսելն իմաստ չուներ:– Եթե միայն սա հասկանար մեզ,– կրկնեց հայրը և աչքերը փակելով ընդունեց քրոջ՝ դրա հետ կապված ենթադրության անհավանականությունը:– Եթե հասկանար, ապա հնարավոր կլիներ ինչ-որ համաձայնության գալ, մինչդեռ այսպես...

– Նա պետք է չքվի՛,– բղավեց քույրը:– Դա է միակ ելքը, հայրիկ: Դու միայն պետք է փորձես ազատվել այն մտքից, թե սա Գրեգորն է: Այն, որ մենք այսքան ժամանակ այդպես ենք մտածել, դա մեր դժբախտությունն է: Բայց ինչպե՞ս կարող է սա Գրեգորը լինել: Եթե սա Գրեգորը լիներ, վաղուց արդեն հասկացած կլիներ, որ մարդկանց համատեղ կյանքը նման մի

կենդանու հետ անհնար է, և նա ինքնակամ կհեռանար: Այդ դեպքում մենք եղբայր չէինք ունենա, բայց կկարողանայինք շարունակել ապրել ու նրա հիշատակը պատվով պահել: Մինչդեռ այսպես այս կենդանին հալածում է մեզ, վախեցնում է կենվորներին, ակնհայտորեն ցանկանում է ամբողջ բնակարանը զավթել ու մեզ գիշերելու տեղ միայն փողոցը թողնել: Տես հապա, հայրիկ,– հանկարծակիի եկած ճչաց նա:– Նա նորից է սկսում:– Գրեգորի համար միանգամայն անհասկանալի սարսափով նա նույնիսկ մոր մոտից հեռացավ, բառացիորեն ետ հրվեց նրա թիկնաթոռից, կարծես իր համար ավելի գերադասելի էր մորը զոհաբերել, քան Գրեգորին մոտիկ մնալ: Նա շտապեց հոր թիկունքում պատսպարվել, իսկ բացառապես քրոջ պահվածքից դրդված հայրը ոտքի ելավ ու ձեռքերն այնպես պահեց դիմացը, կարծես պաշտպանում էր քրոջը:

Սակայն Գրեգորի մտքով բնավ իսկ չէր անցնում որևէ մեկին, առավել ևս քրոջը վախեցնել: Նա ընդամենը սկսել էր շուռ գալ, որ իր սենյակը վերադառնար, իսկ նրա այդ շարժումը աչքի էր զարնել, քանի որ իր ներկայիս ողորմելի վիճակի պատճառով դժվար շարժումներ անելու ժամանակ նա հարկադրված էր նաև գլխի շարժումներով օգնել. նա մի քանի անգամ բարձրացրեց ու հատակին խփեց գլուխը, ապա դադար տվեց ու նայեց շուրջը: Երևում էր, որ իր բարի մտադրությունը հասկացվել էր, իսկ պատճառած վախը պահի դրությամբ էր պայմանավորված:

Հիմա բոլորը լուռ ու տխուր նրան էին նայում: Իր թիկնաթոռին մայրը նստել էր ոտքերը մեկնած ու իրար սեղմած, հոգնածությունից աչքերը համարյա փակվում էին: Հայրն ու քույրը նստել էին կողք կողքի, քույրը ձեռքը հոր վզովն էր գցել:

«Երևի հիմա արդեն կարող եմ շրջվել»,– մտածեց Գրեգորը և վերսկսեց իր աշխատանքը: Նա ի վիճակի չէր լարվածության պատճառած փնչոցները զսպել և երբեմն-երբեմն ստիպված էր հանգստանալ: Ընդհանուր առմամբ նրան ոչ ոք չէր էլ շտապեցնում, ու ամեն ինչ նրան էր թողնված: Երբ արդեն շուռ էր եկել, նա անմիջապես սկսեց ուղիղ գծով ետ դառնալ: Նրան զարմանք

պատճառեց մեծ հեռավորությունը, որ բաժանում էր իրեն իր սենյակից, և բնավ չէր հասկանում, թե ինչպես էր, իր թուլությունը նկատի ունենալով, քիչ առաջ նույն ճանապարհն անցել համարյա առանց նկատելու: Շարունակ արագ հեռանալու մտքով տարված՝ նա հազիվ էր ուշադրություն դարձնում, որ իր ընտանիքի կողմից ոչ մի կանչ, ոչ մի բառ իրեն չէր խանգարում: Միայն երբ արդեն դռան մեջ էր, շրջեց գլուխը, ոչ ամբողջովին, որովհետև զգում էր, որ վիզը փայտանում էր, և այնուամենայնիվ հասցրեց տեսնել, որ իր թիկունքում ոչինչ չէր փոխվել. միայն քույրն էր ոտքի կանգնել: Նրա վերջին հայացքը սահեց մոր վրայով, որը հիմա, ընդարմացած, քուն էր մտել:

Հազիվ էր նա իր սենյակը մտել, դուռը հապճեպ վրա զարկվեց ու կողպվեց: Թիկունքում հնչած հանկարծակի աղմուկից Գրեգորն այնպես վախեցավ, որ տոտիկները ծալվեցին: Քույրն էր շտապողը: Նա հասակով մեկ կանգնած էր եղել, ու սպասել էր, ապա թեթև ցատկով նետվել էր առաջ. Գրեգորը բնավ չէր լսել նրա շարժումները:

– Վերջապես,– ծնողների կողմը շուռ գալով կանչեց նա, երբ փականի մեջ բանալին էր պտտեցնում:

– Իսկ հիմա՞,– ինքնիրեն հարցրեց Գրեգորն ու մթության մեջ շուրջը նայեց: Շուտով նա իր համար պարզեց, որ այլևս ոչ մի քայլ չի կարող անել: Դա նրան չզարմացրեց, ավելի շուտ նրան անբնական թվաց այն, որ ինքը մինչև հիմա իր այդ բարակ տոտիկների վրա կարողացել էր շարժվել: Իսկ ընդհանուր առմամբ նա իրեն հանգիստ էր զգում: Ու թեև ամբողջ մարմինը ցավում էր, սակայն նրան թվում էր, թե ցավերն աստիճանաբար թուլանում են ու ի վերջո ընդհանրապես կանցնեն: Մեջքի մեջ խրված հոտած խնձորը և ամբողջովին փափուկ փոշով ծածկված ապականված միջավայրը նա հազիվ էր զգում: Իր ընտանիքի մասին նա մտածեց սիրով ու հուզմունքով: Իր կարծիքն այն մասին, թե ինքը պարտավոր է անհետանալ, շատ ավելի վճռական էր, քան քրոջը: Այս ունայն ու խաղաղ մտածումներն էին պաշարել նրան, մինչև որ աշտարակի ժամացույցը ժամը երեքը խփեց: Պատուհանից բացվող տարածական-ընդհանուր

լուսավորումը նա դեռ ընկալեց: Այնուհետև գլուխը իր կամքից անկախ անուժ ընկավ, ու թույլ շունչը քթանցքերից դանդաղ ելավ դուրս:

Երբ հաջորդ առավոտյան աղախինը եկավ,– ուժի պաշարից ու շտապելուց նա, ինչքան էլ նրան խնդրել էին այդպես չվարվել, այնպես էր խփում դռները, որ նրա հայտնվելու պահից ամբողջ բնակարանում այլևս ոչ մի րոպե հնարավոր չէր հանգիստ քնել,– Գրեգորի սենյակ իր սովորական կարճատև այցելության ժամանակ սկզբում ոչ մի արտասովոր բան չնկատեց ու մտածեց, թե նա դիտավորյալ է այդպես պառկել ու չի շարժվում, նեղացած է ձևանում: Նրանից նա ամեն ինչ հավատում էր, բայց որովհետև երկար ավելը ձեռքին էր, փորձեց դրանով դռան մոտից խտուտ տալ նրան: Երբ իր այդ քայլն էլ արդյունք չտվեց, նա զայրացավ ու հրեց Գրեգորին, ու երբ զգաց, որ առանց դիմադրության հանդիպելու նրան առաջ հրեց, կենտրոնացավ: Երբ շուտով հասկացավ, թե ինչ է

կատարվել, աչքերը լայնացան, սուլոց արձակեց ու այլևս անկարող լինելով դիմանալ՝ թափով բացեց ննջասենյակի դուռն ու բարձր ձայնեց մթության մեջ.

– Արե՛ք, արեք տեսե՛ք: Սատկել է: Չի շարժվում: Սատկել է:

Զամզա ամուսինները իրենց ամուսնական մահճակալում դիք նստեցին. նրանց առաջին հոգսը աղախնի պատճառած նախնական վախը հաղթահարելն էր, մինչև որ նրա ասածի իմաստը կհասկանային: Ապա պարոն և տիկին Զամզաները՝ ամեն մեկը իր կողմից, շտապ իջան անկողնուց, պարոն Զամզան ծածկոցն առավ ուսերին, տիկին Զամզան միայն գիշերանոցով մնաց, այդպես նրանք մտան Գրեգորի սենյակը: Այդ ընթացքում նաև հյուրասենյակի դուռը բացվեց. կենվորներին մի սենյակը վարձով տալուց հետո Գրետան այնտեղ էր քնում: Նա լրիվ հագնված էր, կարծես բնավ չէր քնել. նրա գունատ դեմքն էլ էր այդ մասին խոսում:

– Մեռա՞ծ է,– հարցրեց տիկին Զամզան ու հարցական նայեց աղախնին, թեև ինքն էլ էր կարող ստուգել դա, և առանց ստուգելու էլ ամեն ինչ պարզ էր:

– Ես որ էդպես եմ կարծում,– ասաց աղախինն ու ավելով Գրեգորի դիակը մի փոքր էլ առաջ քշեց:

Տիկին Զամզան ձեռքը երկարացրեց, կարծես ուզում էր ետ պահել ավելը, բայց չպահեց:

– Դե,– ասաց պարոն Զամզան,– հիմա մենք կարող ենք գոհ լինել Աստծուց:

Նա խաչակնքեց, և երեք կանայք հետևեցին նրան:

– Տեսեք, թե ինչքան նիհար է,– խոսեց Գրետան, որ չէր կարողանում հայացքը հեռացնել նրանից:– Արդեն բավական ժամանակ է՝ նա ոչինչ չէր ուտում: Ինչպես որ կերակուրը ներս էի տանում, այդպես էլ վերցնում էի:

Գրեգորի մարմինը, իսկապես, ամբողջովին չոր էր ու տափակ, և դա միայն հիմա էր երևում, որովհետև հիմա նա այլևս տոտիկների վրա չէր կանգնում ու մարդկանց հայացքները չէր շեղում:

– Գրետա, մի քանի րոպեով մեզ մոտ արի,– դեմքին ցավագին ժպիտով խոսեց տիկին Զամզան, և Գրետան, ոչ առանց դիակի կողմը նայելու, ծնողների հետքով գնաց նրանց ննջասենյակ:

Աղախինը փակեց դուռը և լայն բացեց պատուհանը: Թեև վաղ առավոտ էր, բայց որոշակի ջերմություն զգացվում էր. մարտի վերջն էր արդեն:

Երեք կենվորները դուրս եկան իրենց սենյակից ու զարմացան, թե որտեղ է իրենց նախաճաշը. մոռացել էին:

– Ո՞ւր է մեր նախաճաշը,– մռթմռթոցով աղախնին հարցրեց մեջտեղի պարոնը, մինչդեռ աղախինը մատը արագ դրեց շուրթերին և անձայն ու արագ նշան արեց նրանց, որ նրանք գնային Գրեգորի սենյակը: Նրանք եկան ու ձեռքները իրենց փոքր-ինչ մաշված պիջակների գրպանները դրած կանգնեցին Գրեգորի դիակի շուրջն արդեն լրիվ լուսավորված սենյակում:

Այդ պահին բացվեց ննջասենյակի դուռը, այնտեղ հայտնվեց բարապանի շքազգեստով պարոն Զամզան մի ձեռքով կնոջ, մյուսով՝ դստեր ձեռքը բռնած: Բոլոր երեքն էլ մի փոքր լացած տեսք ունեին: Գրետան ժամանակ առ ժամանակ դեմքը սեղմում էր հոր թևքին:

– Անմիջապես լքե՛ք իմ բնակարանը,– կարգադրեց պարոն Զամզան ու մատով ցույց տվեց դեպի դուռը, առանց կանանց ձեռքերը բաց թողնելու:

– Դուք ի՞նչ նկատի ունեք,– փոքր-ինչ շփոթված հարցրեց մեջտեղի պարոնը և քաղցր-մեղցր ժպտաց: Մյուս երկուսը ձեռքները պահել էին մեջքներին, դրանք անընդհատ քսում էին իրար, կարծես հաճույքով սպասում էին, թե մեծ վեճ է ծագելու, բայց չէին կասկածում, որ այն հօգուտ իրենց էր ավարտվելու:

– Ես նկատի ունեմ հենց այն, ինչ որ ասում եմ,– պատասխանեց պարոն Զամզան և իր երկու ուղեկցորդուհիների հետ ուղիղ գնաց նրանց կողմը: Մեջտեղի պարոնը սկզբում կանգնած էր լուռ ու հատակին էր նայում, կարծես փորձում էր իրերի դրությունը իր գլխում հստակ կարգավորել:

– Եթե այդպես է՝ կգնանք,– ասաց նա ու այնպես նայեց պարոն Զամզային, կարծես իրեն անակնկալ կերպով պաշարած ընկճվածության մեջ իր

13
KAIF-PROVE



այս նոր որոշման հարցում էլ է նրանից համաձայնություն սպասում: Պարոն Զամզան միայն փակեց աչքերն ու այդպես մի քանի անգամ գլխով արեց նրան: Դրան հաջորդեց այն, որ այս պարոնը իսկապես լայն քայլերով միջանցք դուրս եկավ, իսկ նրա երկու ընկերները, որ ձեռքները լրիվ ազատ թողած լսում էին, կտրուկ ցատկով հետևեցին նրան՝ ասես վախեցած, որ պարոն Զամզան հանկարծ կարող է իրենցից առաջ հայտնվել միջանցքում և խափանել իրենց կապը առաջնորդի հետ: Միջանցքում երեքն էլ զգեստների կախիչից վերցրին իրենց գլխարկները, ձեռքներն առան ձեռնափայտերը, լռելյայն խոնարհվեցին ու լքեցին բնակարանը: Որոշակի, սակայն, ինչպես պարզվեց, անհիմն անվստահությամբ պարոն Զամզան երկու կանանց հետ դուրս ելավ հարթակ: Բազրիքին հենված՝ նրանք նայում էին, թե ինչպես են երեք պարոնները թեև դանդաղ, բայց առանց դադարի ներքև իջնում երկար աստիճաններով. ամեն սանդղահարթակի հարկում՝ որոշակի դարձի վրա անհետանում էին, ապա մի քանի ակնթարթ անց նորից էին հայտնվում: Որքան ներքև էին իջնում, այնքան ավելի էր Զամզա ընտանիքը կորցնում հետաքրքրությունը նրանց հանդեպ, իսկ երբ նրանց ընդառաջ ու նրանցից վեր

սկսեց բարձրանալ գլխին մատուցարան պահած, հպարտ կեցվածքով մսագործի աշակերտը, Զամզա ընտանիքը թողեց բազրիքը, և բոլորը միասին, կարծես հանգստացած, վերադարձան բնակարան:

Նրանք որոշեցին այսօրվա օրը տրամադրել հանգստանալուն և զբոսնելուն, այս աշխատանքային ընդմիջումը նրանք ոչ միայն վաստակել էին, այլև անպայման ունեին դրա կարիքը: Եվ նրանք նստեցին սեղանի մոտ ու երեք բացատրագիր-նամակ կազմեցին. պարոն Զամզան՝ իր տնօրինությանը, տիկին Զամզան՝ իր պատվիրատուին, իսկ Գրետան՝ իր ղեկավարին: Մինչ նրանք գրում էին, ներս եկավ աղախինը և տեղեկացրեց, որ ինքն արդեն հեռանում է, որովհետև առավոտվա աշխատանքն ավարտել է արդեն: Գրելով զբաղված՝ երեքն էլ առանց վերև նայելու նախ միայն գլխով արեցին, և միայն երբ աղախինը չէր ուզում հեռանալ, դժգոհ նայեցին նրա կողմը:

– Ուրի՞շ,– հարցրեց պարոն Զամզան: Աղախինը ժպտադեմ կանգնել էր դռան մեջ, կարծես մտադիր էր ընտանիքին մի մեծ ավետիս հայտնել, բայց դա կաներ միայն այն դեպքում, երբ իրեն մանրամասն հարցուփորձ անեին: Նրա գլխարկի վրայի համարյա ուղղաձիգ ջայլամի փետուրը, որ նրա՝ այս բնակարանում աշխատելու ամբողջ ընթացքում արդեն զայրացնում էր պարոն Զամզային, անկաշկանդ ճոճվում էր բոլոր ուղղություններով:

– Դե, ի՞նչ է ձեր ուզածը,– հարցրեց տիկին Զամզան, որի հանդեպ աղախինն ամենից շատ էր հարգանք տածում:

– Հա,– խոսեց աղախինը և դեմքին հայտնված մտերմիկ ժպիտի պատճառով չկարողացավ անմիջապես շարունակել իր միտքը:– Էն բանի մասին, էլի: Թե ինչպես պետք կլինի էն բանը այնտեղից տանել, կարիք չկա, որ անհանգստանաք: Արդեն արել եմ:

Տիկին Զամզան ու Գրետան կռացան իրենց նամակների վրա, կարծես ուզում էին շարունակել գրելը: Պարոն Զամզան, որ նկատել էր, թե հիմա արդեն աղախինը միտք ունի իր արած գործը մանրամասն ներկայացնել, ձեռքի վճռական շարժումով կանխեց նրան: Եվ երբ նա զգաց, որ իրեն թույլ

չեն տալիս պատմել, հիշեց, որ անչափ շտապում է, ակնհայտ դառնացած գոչեց «Լա՛վ մնաք», կտրուկ շուռ եկավ ու բնակարանի դռները սարսափելի ուժգին վրա խփելով հեռացավ:

– Վաղվանից նա այստեղ էլ չի աշխատի:– ասաց պարոն Զամզան, բայց ոչ տիկին Զամզան, ոչ Գրետան ոչինչ չասացին, որովհետև զգացվում էր, որ աղախինը խախտել էր նրանց հազիվ վերագտած հանգիստը: Նրանք վեր կացան տեղից, մոտեցան պատուհանին ու կանգնեցին միմյանց գրկած: Պարոն Զամզան իր բազկաթոռի մեջ շրջվեց նրանց կողմը և լուռ զննում էր:

– Դե, ինձ մոտ եկեք,– կանչեց նա:– Անցածն անցած է: Մի քիչ էլ իմ մասին մտածեք:

Երկու կանայք անմիջապես հետևեցին նրա հորդորին, շտապեցին նրա մոտ, գգվեցին նրան ու արագ ավարտեցին նամակները:

Դրանից հետո երեքով միասին դուրս եկան բնակարանից, ինչը չէին արել արդեն ամիսներ ի վեր, և էլեկտրագնացքով մեկնեցին քաղաքից դուրս: Միայն նրանք էին նստած տաք արևով ողողված վագոնում: Իրենց թիկնակներին հարմար ետ ընկած՝ նրանք քննարկում էին ապագայի հեռանկարները, և պարզվեց, որ մոտիկից դիտարկելիս դրանք այնքան էլ վատ չէին, որովհետև բոլոր երեքի պաշտոնը, թեև նրանք մինչև այժմ չէին հետաքրքրվել, անչափ նպաստավոր էր ու ապագայի հեռանկարով խոստումնալից: Իրադրության ակնթարթային ու ամենամեծ փոփոխությունը, իհարկե, այն կլիներ, որ բնակարանը փոխեին: Ներկայիս դրությամբ նրանք ուզում էին ավելի փոքր, էժան, բայց ավելի լավ դիրք ունեցող ու ավելի հարմարավետ բնակարան գտնել, քան այժմյանն էր, որ դեռևս Գրեգորն էր ընտրել: Մինչ նրանք զրուցում էին այդպես, պարոն և տիկին Զամզաները իրենց ավելի ու ավելի աշխույժ դարձող աղջկա տեսքից գրեթե միաժամանակ նկատեցին, թե ինչպես էր նա, չնայած վերջին ժամանակներում իր ողջ չարչարանքին, որ խլել էր այտերի կարմիրը, փթթել՝ վերածվելով փարթամ ու գեղեցիկ աղջկա: Ձայները

կտրելով ու համարյա բնազդաբար միմյանց հայացքներով հասկանալով՝ նրանք մտածեցին այն մասին, որ ժամանակն է նրա համար մի կարգին ամուսին գտնել:

Կարծես ի նշան իրենց նոր երազանքների ու բարի մտադրությունների, երբ հասել էին նպատակադրված վայրին, դուստրը առաջինը ելավ տեղից ու իր ջահել մարմնով մեկ ձգվեց:

Ֆրանց Կաֆկա

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Franz Kafka

DIE VERWANDLUNG

Նկարազարդումները՝ **Զաքար Դեմիրճյանի**
Illustrations by **Zack Demirtshyan**

Հրատ. բաժնի ղեկավար	**Հռիփսիմե Մադոյան**
Հրատարակչության խմբագիր՝	**Արքմենիկ Նիկողոսյան**
Տեխնիկական խմբագիր՝	**Արարատ Թովմասյան**
Սրբագրությունը՝	**Մարգարիտ Առաքելյանի**
Համակարգչային ձևավորումը՝	**Վիտալի Ասրիևի**
Կազմը՝	**Զաքար Դեմիրճյանի**

Head of the Publishing Department	**Hripsime Madoyan**
Chief Editor	**Arkmenik Nikoghosyan**
Technical Editor	**Ararat Tovmasyan**
Corrected by	**Margarit Araqelyan**
Layout by	**Vitali Asriev**
Cover by	**Zack Demirtshyan**

թվագրումը 1915.ին հայտնի

Ականարես

«ԱՆՏԱՐԵՍ» հրատարակչություն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374) 58 10 59, 56 15 26
antares@antares.am, www.antares.am

«ANTARES» Publishing House
50a/1 Mashtots Ave., 0009, Yerevan, RA
Tel. +(374 10) 58 10 59; 56 15 26
antares@antares.am, www.antares.am

ZACK STUDIO

«Զաք ստուդիա»
Հեռ.՝ +(374) 98 111 333
info@zack-studio.co, www.zack-studio.co

«Zack Studio»
Tel. +(374 98) 111 333
info@zack-studio.co, www.zack-studio.co